Երբ Յուլիսի այդ հինգշաբթին կը մտնենար, Գուրեան օրեր առաջ կը խանդավառուէր եւ կը խանդավառէր մեզ՝ շրեղօրէն կատարելու համար անոնց անուններու ու փառքին նուիրուած բացօթեայ հանդէսը՝ որ տեղի կ'ունենար Վանքին տիպար այգիին մէջ:



ՏԻՐՍՅՐ Ծ. ՎՐԳ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Գուրեան այդ գիշեր փայտի մեծ շեղջակոյտի կրակ մը վառել կուտար մեզի՝ համոզուած բացառելով թէ հայ Ազգի Կրակի, Կենդանութեան խորհրդանշանն էին Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ: Գուրեանի աչքերը գերազանցապէս կը բոցավառէին նաեւ, երբ իր աշակերտներուն՝ մարգարէի նման այդ պահուն կ'արտասանէր Վահագնի նուիրուած սա զոհար քերթուածը:

«Երկներ երկին եւ երկիր,
Երկներ եւ ծիրանի ծով,
Ընդ եղէգան ուներ զկառմբիկ եղէգնիկն,
Եւ ի բոցոյն պատանեկիկ վագէր,
Նա հուր հեր ուներ,
Եւ աշկունքն էին առեգակունքն»:

Գուրեան կը պատգամէր. «Վահագնի եւ Պրոմէթէոսի կրակները մեր բնաշխարհին բերած են Սահակ-Մեսրոպ»:

Իսկ մեր մէջ ո՞վ վառած է այն սրբազան հուրը՝ որ բնաւ չմարիր: Այդ հուրին աւերն էր Գուրեան Եղիշէ, այդ հուրին հարազատ զաւակներն եղան Զաւէն ու Մեսրոպ, ու անոնց յաշորդներն Գարեգին ու Ղեւոնդ, եւն. եւն.: (*):

ՏԻՐԱՅԻ Ծ. Վ ՄԱՐԳԱՐԵԱՆ

(*) Գուրեան Սրբազանի Ազգին բնծայած 7 եկեղեցականներուն առաջին շարքին մէջ պէտք է առաջին տեղը տայ Բաբգէն Սրբազանի, որ իր բազմաթիւ կարեւոր հրահարուկութիւններով եւ ուսումնասիրութիւններով մեծ ծառայութիւն մատուցած է հայ գրականութեան. բեղուն միտքով եւ գործնական ոգիով օժտուած այս եկեղեցականը ներկայիս կը վարէ Երուսաղէմի «Սիոն» ամսագրերը, ջերմապէս գրասէր հայու:



ԲԱԲԳԷՆ ԵՊ. ԿԻՒԼԷՍԷՐԵԱՆ

ԳԻՒՂԻՆ ՎԱՐԺԱՊԵՏԸ

Սրանից ուղիղ 57 տարիներ առաջ փէրիա գաւառի Սանգիբարան գիւղը ունեցած է իրեն դպրոցը **Պօղոս Անդրէասեան** անունով ինչպէս եւ իրեն ուսուցիչն յանձին Ջուղայեցի Դաւիթ Կարապետ Դաթեանցի, *մի բան որը չափազանց հազուադէպ, բայց միեւնոյն ժամանակ գովելի եւ ուրախալի: Որպէս կը ասենենք Պարսկահայ պատմութիւնից, այդ տարիներին (1870) Պարսկական հայաբնակ քաղաքներն եւ կեդրոնները մինչ անգամ զուրկ են եղած դպրոցներից: Եւր մնաց հայ գիւղերը կարողանային երազել դպրոց եւ կրթութիւն: Զաւարճակ Պօղոս, Կարապետ Անդրէասեան վասնառական եղբայրները կտակում են մի համեստ գումար Սանգիբարան գիւղի երախաների կրթութեան համար, հիմնադրամը թողնելով Բաթավիոյ Ս. Յովհաննէս եկեղեցւոյ իննամբին, որի տարեկան տոկոսը ամեն տարի վարչութեան կողմից ուղարկուելով Ջուղայի Առաջնորդարանին յատկացրուի յիշեալ գիւղի դպրոցին, որն եղած է տարեկան հազու թէ 50 տօլար: Սակայն երբ ուսումնասիրենք եւ մօտից դիտենք այսրան մի փոքրիկ գումարի արգիւնները պիտի զարմանանք, բա-

մի գիւղ եւ ամբողջ 36 տարիներ ծառայեց ժողովուրդին կրթելով գիւղի մանուկներին տարածելով բոլոր գիւղերում գիր ու գրիչը: Որքան որ հին-նախապաշարունակներով լցուած մի մարդ էր եւ իրեն սովորեցրածը չէր ժամից այն այն կողմ, սակայն նա դրեց գիւղացու սրտումը կրթութեան հիմը ցանկով սերմեր որոնք այսօր անելով աւատ հունձք կուտան: հասաւ 1906 թ. գիւղերում բացուեցին դպրոցներ շնորհիւ Ռուսահայ բարերարներին եւ շինարար մի հոգեւորականի: Ուղարկուեցին ուսուցիչ-ուհիներ նոր ծրագիրներով եւ նոր դասագիրքերով: Տիրացու Դաւիթը տեսնելով որ իրեն շքանը վեջ է, բաշուեց ասպարէզից վերցնելով իրեն անբաժան ընկեր Նարեկին եւ մէկ էլ իրեն մայրիկին ձեռքով կարուած վերմակն որին շատ կը սիրէր եւ որն եղած էր իրեն 36 ամեայ ծածկոյթ, գնաց իրեն հայրենի տունը Զուղա մրմնջալու իրեն վերջին աղօթքը: Գնաց վարպետը Սանգիբարանից, բայց մնաց իրեն անունն անմուսց: 1919 թ. մի օր երբ իրեն ազգականներն, որոնց հետ կ'ապրէր, կը նկատեն որ Դաւիթը սենեակից գուրս չի գալիս, կը կասկածին եւ կը հետաքրքրուին կամացուկ իրեն սենեակը մտնելով: Բայց... մեռել է վարպետ Դաւիթը ծնկաջոր իրեն սիրած Նարեկը ձեռքին: Այսպէս, մեռաւ այս խորհրդաւոր անձն որը 36 տարիներ անդու աշխատեց մի խուլ գաւառում տարածելով Ս. Գիրքն եւ գիր ու գրիչը: Զուճեցաւ ո՛չ քաջալերող եւ ոչ էլ իրմով հետա-

քրքրուող, ուր մնաց գնահատող կամ Յորելեան: Իրեն ստացած այդ չնչին ռոմիկից տնտեսացն ինչպէս եւ իրեն բաժին ժառանգութիւնն իրեն Նարեկին հետ կտակաց մի մասն ազգականներին եւ միւսը իրեն ծխական Ս. Յովհաննէս եկեղեցուն, խնդրելով որ տարին մի անգամ իրեն հոգեհանգիստ կատարուի: Ուրեմն սրանից յետոյ որքան էլ որ Պարսկահայ գաւառներում բազմանայ դպրոցների թիւն եւ տարածուի կ'ըջութիւնը չալտի մուսուսն որ հիմնադիրներն եղած են Զավարնակ Պողոսեան եղբայրներն, իսկ առաջին վարժապետը Դաւիթը եւ որոնց յիշատակը միշտ անջինջ եւ անմուսաց կը մնայ Սանգիբարան գիւղումն ինչպէս եւ բոլոր Փէրիալումն:

ՅՈՎԱԿԻՄ ՔԷՆՅ. ԲԱՐՍԵՂԵԱՆ

1927 Bombay

ՀԻՆ ԷՋՅԵ

ԱՍՏՂԻԿ ՈՒ ՓԱՄՓՈՒՇՏ

Բոց շըւինդ, ճանանչ թափելով չորս դին,
 Փամիուշտը, թըւաւ, վերացաւ երկին,
 Ու վերէն ի վայր արձակեց մեծ լոյս,
 Խաւար գիշերը դարձուց արշալոյս...
 Հիացան մարդիկ, մընացին ասլած,

Փանիրուշան ալ իրմով էր շատ զարմացած.—
 Նայեցաւ երկինք, տեսաւ մի աստղիկ,
 Որ կը պըսպըզար իր լուսով հեզիկ,
 Ու քըմծիծաղով աստղիկին ասաց.
 «Ահա իմ լոյսը քանց քոն գերազանց...»,
 Ասաց, ծիծաղից ու շուտ պայթեցաւ,
 Պահ մի լոյս երկինք նորէն մըթացաւ,
 Իսկ հեզ ու համեստ պըլպըլտղ աստղիկ
 Մինչեւ այսօրըս կը փայլէ մեղմիկ:

Գ.Մ.Ա.Ռ.—Բ.Ռ.Ի.Պ.Ա.

ԸՆՏԻՐ ՄՏԱՆՈՒՄՆԵՐ

Ի՛նչ ազգ որ աշուղներ չունի,
 Նա իւր սրտումն սէր չունի.
 Ի՛նչ ազգ սրտումն սէր չունի,
 Նա Սասունոյ պատկեր չունի,
 Ո՛վ Սասունոյ պատկեր չունի,
 Նրան բարի գործեր չունի.
 Ի՛նչ մարդ բարի գործեր չունի,
 Նրան աշխարհին խէյր չունի,
 Նորա կեանքը քամոյ պէս է,
 Իննքն չարեաց միաբանող:

ՍԷՅԱ.Գ. (*)

(*) Կովկասահայ գինուորական (Մոզսէս Բէզ Զօհ-
 րապետն, 1880 քուականներում ոտանաւորներ գրող մը
 էղած է:

ՎԱՐԴՆ ՈՒ ՓՈՒՇԸ

Վարդն աղբրանքով ասում էր փուշին,—
 «Շղթա՛յր, դուն միքէ այդքան անփո՛յր ես,
 Որ քոյրը կանուրեամբ՝ ինձ ձեռք մեկնողի՝
 Մատները ու սրբար ծակես, կ'արխնես:

Զէ՛ որ աշխարհում կոպիս վարձունքը
 Մի՛՛սն անախարձ է՛ ամէն էակին.
 Եւ այդ էլ մի՛ կողմ... կապա չն՞ս յարգեր՝
 Համակրանքն այլոց՝ դէպ քո քոյր-վարդին...:

Փուշը, սառնութեամբ, սկըսեց ասել,—
 «է՛, սիրուն քոյրիկ, էյ աշխարհ, մարդի՛նք...
 Կարծեմ քէ ինձնից է՛լ կոպիս լինին՝
 Երբ խա՛ր չեն զենումբնութեան մեծ գաղտնիքը—

«Կա՛յ արդե՛տ գեղ վարդ մ'առանց փուշ-խոցի,
 Եւ կա՛յ վայելի մը գերծ խոկուններից...
 'Քո գեղ-քոյր սիրող, քոյ լա՛ւ կասկընայ՝
 Վարդն ու փուշը նո՛յն են, նո՛յն մի արմատից:

«Կես՛ներ բարեխա՛նն է՛ միշտ այս աշխարհում.
 Առանց փուշերի՛ վարդ, վայելի չը կայ.
 Սէ՛ր, ծայիս, արցունք, մի՛շտ, բարին ու չար...
 Բնութեան օրէնքով՝ միշտ խառն կը մնայ...:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՀՆՅ. ՍԱՐՀԱՏԵԱՆ

1926 Մայիս
Թէհրան

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՇՆԵՐ

— Ծառի ճըճին ծառէն է,
 Չար թշնամին տունէն է,
 Վա՛յ այն տոհմին՝ այն աղբին,
 Որու մատնիչն աղբէն է:

— Խոց որ բացուի դանակով՝
 կը փակուի ժամանակով,
 Խոց մը որ բացուի լեզուով՝
 Չը փակուի ոչ մի բանով:

Վար ընկնողին ձեռքէն բռնես,
 Աստուած քու ձեռքէդ կը բռնէ,
 Վար ընկնողին ստքով զարնես,
 Աստուած ալ գըլխուդ կը դարնէ:

— Ես կաթ մի ջրի եմ կարօտ,
 Որ խըմեմ ծարաւս անցնի,
 Նա կամրջի է կարօտ,
 Որ ջըրէն անդին անցնի:

— Հիւրը տանտիրոջ մօտին
 Վարդ է՝ կը գմայլի հօտին.
 Բայց թէ շատ կենայ մօտը,
 կը թուով կ'երթայ հօտը:

— Կըտրիճըն որ ձիէն ընկնի,
 Ֆատկէ նորէն կը հեծնի.
 Ես կըտրիճը անո՛ր կ'ասեմ,
 Որ ընկնի՝ նորէն կանգնի:

ՉԸՐՉԸՐԻ ԶՈՒՐԸ



Այցելուք.— Սիրուն Չըրչըր, որ գարուն ու աճառ չորս հովերէն կը հաւարես շուրջդ ամբոխ մը վարդի պէս ծիծաղերես, օ՛ն պատմէ ինձ, ուսկի՞ց կուգաս, ո՞րն է ականդավէպդ, ի՞նչ նիւթեր ունիս բուժիչ մէջը ջրիկիդ անուշիկ, որ մարգագետնին վըրայ կաթկթող ցօղին պէս կ'իջնէ հեզիչ ներսը խմողին ու կը գործէ հոն հրաշքներ...:

Չըրչըր.— Ազնիւ այցելու, որ կը փափարիս զիտնալ ականադրիւս, ականդավէպս եւ բաղադրութիւնը ջրիկիս, ահա բեզ անոնք մի առ մի:

* * *

Ա.կնադրիւս.— Չիս շրջապատող ջրարբի բըլւրներէն կը բղխի ականադրիւս, ուսկից ջուր առած բաւականաչափ՝ մութ ժայռերու ծոցէն կուգամ ես Չըրչըր: Ստորերկրեայ ծարաւահիւժ մարմիններ եւ բիւր էակներ կ'ըմպեն ֆամբան անյագաբար իմ ջուրէս, որ կիսասպառ կը հասնի ծորագիւղս Սարընար ու հոն հազիւ փոքրաքանակ կը հօսի ստորոտէն ժայռիս, ուր կը տեսնես գիս:

Ա.ւանդավէպս.— 1860 թուականին Յունիսի գեղեցիկ օր մը՝ ծորահովախ թաւուտ թուփերուն

մէջ կը շրջագայէր երեսունըչորս տարեկանի մօտ երկայնահասակ երկայնամորուս, նրբամարմին վարդապետ մը, որ երեւոյթն ունէր ներքին անհանգըստութենէ նեղուած մարդու մը:

Գրեթէ հասեր էր առջեւը ջրիկիս, ու տեսնելով ժայռիս ստորտէն հասումս մեղմիկ կոչեց զիս **Զըբըբ:** Մօտեցուց ապա շրթունքը ջրիկիս, կուշտ կուշտ խմեց, եւ զգաց իսկոյն ներսիդին թեթեւութիւն եւ հանգստութիւն մ'անպատում, վերադարձաւ ապա բովիկս կըրկին ու կրկին եւ շարունակեց այսպէս երեք ամիս:

Վննետիկի Մխիթարեաններէն Կոստանդնուպոլսեցի Բականեան **Զ. ԵՒԳԻՆԷՈՍ ՈՍՎԱՆԵԱՆ** դապետն էր յիշեալն, որուն աչեւորութեանը դէմքը^(*) կը տեսնես ահա հոս: Եկեր էր նա այս կողմերս օղափոխութեան, ու գտեր ջրիկէս փնտռած դարմանը, բուժուեր կ'տարերապէս ու դարձեր կայտառ եւ զուարթ:

Վարդապետս յանհունս երախտագէտ ջրիկիս հրաշագործ, չուշացաւ զետեղելու վրաս քար մը եւ

(*) Լուսանկարս քաշուած է 28 տարի վերջ վերոյիշեալ 1860 թուականէն:



Զ. ԵՒԳԻՆԷՈՍ
ՈՍՎԱՆԵԱՆ

տուաւ ինձ աղբիւրի մէլ, փութաց ապա համբաւել ամէն կողմ զօրութիւնս բուժիչ: Վարդապետիս աշունով Թուրքերը կոչեցին զիս **Վափագ սուլու:** Այնուհետեւ դարձայ ես իբր ուխտատեղի, յարգեցին զիս հետզհետէ, կամարակապ փորուածոյ մէջ կանուցին աղբիւրիկ մի քարաշէն, հովանիին տակ տեքեախիտ շագանակհնիներու, բարտիներու եւ ակասիաներու, ուր վեց գեղազուարճ ամիսներուն մէջ տարւոյն կը հաւաքուի շուրջս ամբոյս մը երկսեռ, կ'ըմպէ ջրիկէս հրաշագործ ու կը մեկնի ուրիս զուարթ:

Բաղադրութիւնը ջրիկիս. — Հիւնքեար եւ Գէսթանէ յոխորտանքով կը նային վրաս վերէն, պարծենալով իրենց յորդաբաւիս պաղ ջուրերով, բայց ի զօւր, ինչ որ ալ ընեն, չեն կրնար կոտորել արժէքը ջրիկիս փոքրարանակ, որ իր մէջ ունի այնպիսի տարրեր բուժիչ, որուն համբաւը իրեն կը քաշէ ստուար մասը այցելուններուն, որոնք կը խմեն զայն իբր ջուր հրաշագործ ու լեցուցած շիշերու մէջ կը տանին հետերնին...: Ու ժողովուրդի լոկ երեւակայական հաւատքն չէ հուշակողը համբաւս, այլ նոյն իսկ իսկական արժէքս. որոյ մասին վկայած են նշանաւոր անձինք ու մասնագէտներ տարբարութեամբ ջրիկս: Համեստութեան դէմ չգործելու համար ես **Զըբըբ** կը լռեմ այլեւս, եւ կը հրաւիրեմ այցելուդ որ կարդայ ջրիկիս մասին տրուած այս տեղեկագիրը որ շրջանակի մէջ դրուելով կախուած է աղբիւրակս պարփակող որմէն:

թեանց դարմանումսին մեծապէս կը նպաստէ: Չըր-
 չըրի ջուրը՝ իր այս բուժիչ յատկութիւններէն զատ՝
 թարմ վիճակի մէջ ախորժելի եւ համեղ է, եւ մա-
 նաւանդ գործարանաւոր տարրերէ զերծ ըլլալուն
 համար ուրիշ ջուրերուն վրայ առաւելութիւն ունի(*):

* *

ՉԸՐՉԸՐԻ ԱՅՅԵԼՈՒՆ

Ա.Ռ.

Հ. ԵՒԳԻՆԷՌՈՅ Վ. ՈՍԿԱՆԵԱՆ

Օրհնեա՛լ յեշատակդ, Հա՛յր եւգիւնէսս,
 Բզբեղ գեղգեղէն թռչնիկներ հովտիս,
 Քեզմով կը պարծի Չըջըջ սեղմահոս,
 Քեզ այցելուներ կու տան բեր սօրհնիս:

Իու նախկին գտիչ մեր Չըջըջին սիրուն,
 Որ Պրսբատիկեան բուժիչ էր ջուրով

(*) Ազդարար օրաթերթը անցեալ տարւոյ 11 Օգոս.
 և 210 թիւին մէջ հրատարակեց հետեւեալ տեղեկու-
 թիւնը, թէ քաղաքապետութիւնը որոշած է գնել Չըր-
 չըրի ջուրը: նկատելով որ այս ջուրը բուժիչ յատկու-
 թիւն ունի, պիտի շահագործուի ի նպաստ հանրային
 օգտին: Այս առթիւ բնութիւններ կը կատարուին ա-
 ուղջապահական տնօրէնութեան կողմէ: Չուրը զանուած
 տեղը պիտի գնուի Քաղաքապետութեան կողմէ:

Հրաշքներ կը գործէ բեր՝ ամէն գարուն,
 Տալով այցելուին նոր կեանք եւ կորով:

Քանի Չըջըջի հոսէ ջուրը ջինջ,
 Հովանիին տակ ծառերուն հոկայ
 Յաւէտ պիտի մնայ յեշատակդ անջինջ
 Այս աղբերակով քաղցր հոգւոյդ վեկայ:
 Հ.ԵՓՐԵՄ Ծ. Վ. ԱՊՐՈՅԵԱՆ

Կենսագրական.— Հ. Եւգինէոսին գերդաստանի
 ծագումն կարնէն է, իսկ ինքն ծնած Կ. Պոլսի 1826
 Սեպտ. 20 (Հ. Տ.): Հայրն կը կոչուէր Քերովրէ՛ Կար-
 նեցի, մայրն Իսկուհի՛ Կ. Պոլսեցի: Հ. Եւգինէոսի
 մկրտութեան անունն էր Յակոբ, 1839 Օգոստոսին
 ղրկուեցաւ Վենետիկի Մխիթարեանց վանքը, ուր
 ութ տարի ամբողջ հրահանգուելով, 1847 Մայիս
 13ին ձեռնադրուեցաւ քահանայ Հիւրմիւզեան Գէորգ
 արք. Աբրահայրէն: Այս թուականէս սկսեալ մինչեւ
 ալեւոր հասակը նուիրեց նա իր կեանքը Միաբա-
 նութեան գործերուն եւ դաստիարակութեան ազգա-
 յին մանկանց թէ՛ վանքի եւ թէ Արեւելքի մէջ:
 Յիշատակութեան արժանի է Բերայի Սազըզ-Ա-
 դաճի Մխիթարեանց Վարժարանին մէջ վարած տես-
 չութիւնը 1865էն մինչեւ 1870 թուականը: Ժամանակ
 մը աշխատեցաւ նաեւ Փարիզու Մուրատեան վար-
 ժարանին մէջ յետոյ երկար տարիներ Ս. Ղազարու
 վանքին մէջ իբրեւ գործակալ Միաբանութեան եւ
 իբրեւ հոգեւոր հայր եւ դաստիարակ վանքի աշա-
 կերաց, պաշտօն մը՝ զոր վարեց իբր 11 տարի:

Հ. Եւզիմէոս իր արդիւնաշատ կեանքին մնացորդ մասը անցուց Ճգնաւորական սրբութեամբ, որով եւ կնքեց իր մահկանացուն 1913 Յունուար 11ին 87 ամեայ ծերունագարդ հասակին մէջ, ու թուա վերնագաւառը ըմպելու հոն կենաց աղբիւրի անըսպառ ջուրէն, որուն անմահացուցիչ կաթիլներուն քով կը դառնանայ անտարակոյս անուշիկ չրիկը Չըրչըրին... Տայ Աստուած Չըրչըրի այցելուններուն ալ օր մը խմելու կենաց աղբիւրի անսպառ ջուրէն, զոր 14 տարիէ ի վեր կը վայելէ Հ. Էւզիմէոս երկնային դրախտին մէջ:

Հ. Ե. Մ. Վ. Ա.

Առողջապահիկ կանոններ. — Չափազանց ուտելը հիւանդութիւններուն հայրն է:


— Բարեխառն երիտասարդութիւն, կանուխ ամուսնութիւն, աշխատանք, մտաւոր թէ ֆիզիքական, առանց մինչեւ ծանր յոգնութեան երթալու, անդաւկան ժուժկալութիւն, մանաւանդ գիշերը, նզովք ոգելից ըմպելիներու:

— Հոգեվարք գինեմոլի մը սնարին վրայ երկու բժիշկներ կը խորհրդակցին: Երիտասարդ եւ զիտուն բժիշկը կ'ըսէ. «Խեղճ մարդը վերջին գաւաթին զոհն է, արդարեւ եթէ այդ գաւաթը խմած չըլլար, կը փրկուէր...»:

— Ծեր եւ փորձառու արուեստագէտը որ հոգեբան ալ էր, իր հայրական ձեռքովը երիտասարդ բժիշկին ուսը ծեծելով կը պատասխանէ. «Այս մարդը ոչ թէ իր վերջին՝ այլ առաջին գաւաթին զոհն է...»:


(ՔԱՂՈՒԱԾՔ)

Յ Ի Ա Ր Չ Ա Կ Ա Ր Ա Ն



Ձ Ի Ր Ձ Ա Կ Ա Ր Ա Ն Ը

(ԱԹՄԷՅՏԱՆԸ)



Սուլթան Ահմետի պեղումները սրոնց արդիւնքը կը մնայ անծանօթ դժբախտաբար, հանրութեան հետաքրքրութիւնը գրաւած է պահ մը: Շահեկան է կարծեմ, պրպտել անոր սկիզբը եւ հետզհետէ կրած դիմայեղումները:

Բիւզանդիոն իր հիմնարկութեան թուականէն (658) 168 տարի ետքը կ'իյնայ Պարսից իշխանութեան տակը, որուն ձեռքէն կ'առնուի 479ին Պաւսանիասի կողմէն: 472ին Կիսոն կը գրաւէ, 408ին Աղկիպիար: Պեղսպոնէսեան պատերազմէն ետքը կը գրաւէ Լիւսանդր 407ին եւ Յունաց իշխանութենէն ետքը Հռովմայեցիք կը գրաւեն 196ին:

Զիարձակարանը որ Այս—Սօֆիայի արեւմտեան հարաւային կողմը կ'իյնայ, կ'սկսի շինուել Սեպտիմ Սէվէրէն եւ կ'ամբողջանայ անոր յարդարումը Գոստանդիանոսի օրով 335ին: Այս հրապարակին մէջ էր որ տեղի կ'ունենային ամէն տեսակ մրցութիւններ եւ խաղեր Կ. Պոլսոյ հիմնարկութեան տարեդարձներուն: Այս հրապարակը հին ատեն բոլորովին պարսպապատ էր եւ սիւնազարդ դաւիթներով եզերուած: Հոն կայսրերն իրենց բոլոր հետեւորդ-

ներով ներկայ կ'ըլլային խաղերուն եւ մրցութեանց: Օձագալար սիւնը՝ զոր Աթենացիք նուիրեցին 479 (Ն. Բ.) Դեղիքեան պատգամին՝ փոխադրուեցաւ Կ. Պոլսոյ ձիարձակարանը Մեծն Կոստանդիանոսի միջոցաւ: Սուլթան Սիւլէյման 1535ին կտրտեց աւրեց զայն եւ նորոգուեցաւ 1856ին: Յուստիանոսի ժամանակն է երկրորդ շրջանը Կ. Պոլսոյ փառաւորութեան. իր կառուցած գլխաւոր յիշատակարանները Նիհա ըսուած յեղափոխութիւնէն ետքը 532 ին ուր 30000 հոգի սպանուեցաւ Զիարձակարանին մէջ Բելիսարի ձեռքով) հետեւեալներն են, Սուրբ Սօֆիա տաճարը զոր օծումով նուիրագործեցին 537 Դեկտ. 28ին: 870ին Մակեդոնացին Վասիլ նորոգեց զայն: 1204ին Եկեղեցին աւարի արուեցաւ Լատիններէն:

Արեւմտեան կողմն էր կայսերական նստարանը, զոր վեր կը բռնէին ութսուն մեծ սիւներ եւ ուր կայսրը ու բովանդակ հետեւորդները հանդիսատես կը բազմէին: Եւ այս սիւներու երկու կողմերը կը բռնէին «կապոյտ եւ կանաչ» ըսուած կուսակցութիւնները որ մանաւանդ մայրաքաղաքին մէջ առիթ կ'ըլլային խռովութեանց, աւարառութեանց, ոճիրներու եւ կոտորածներու եւ իրենք եղան վերջապէս գլխաւոր պատճառներէն մէկը Յուսական կայսրութեան կործանման:

Այս ընդարձակածաւալ Զիարձակարանը հարզհետէ անձկացաւ, վասնզի մէկ կողմը շինուեցաւ

Սուլթան Ահմէտի մղկիթը եւ միւս կողմը այն հին շէնքը, որ **Գուէսորիսն** կամ գանձարանն կը կոչուէր՝ կառուցուած Մեծն Կոստանդիանոսէն որ այժմ **Տէփրէիսանէ** կը կոչուի:

Իսկ այն բազմաթիւ սիւներն ու անդրինները, դից ու դիւցազանց արձանները, եւ յոյն արուեստագիտաց յիշատակարանները որ կը զարդարէին այս ձիարձակարանը, Կ. Պօլսոյ Յրանաօցիներէն եւ Վենետիկցիներէ գրաւուելէն ետքը կործանեցան եւ տեղափոխուեցան եւ անոնցմէ մասցորդներն ալ, **Ֆաթիհի** աշխարհակալելէն ետքը նոյնպէս վար առնուեցան եւ այլուր փոխադրուեցան. հրաշքով մը՝ միայն երեք հին յիշատակարաններ պրծան փամանակաց այս աւարառութիւններէն:

Ասոնցմէ մին չորեքանկիւնի կրանիդեայ կոթողը՝ եբք վաթսուն ոտք բարձրութեամբ, որուն վրայ կ'երեւին եգիպտական մեհնարգիրերը: Այս խորհրդաւոր գիրերը կը ցուցադրեն եգիպտացուց պատմութիւնը եւ դիցաբանութիւնը ինչպէս նաեւ փարաւոններու գործերը:

Այս կոթողը կառուցուած էր Թուլթմոսիս Բ. փարաւոնը (ըստ Մաննթու պատմագրին) Քրիստոսէ 1600 տարի առաջ: Հելլոսպոլիսէն փոխադրուած էր Ստորին եգիպտոս եւ հոն Արեգական մեհնանին հանդէպ կանգնած էր ուրիշ կոթողներու հետ: Մեծն Թէոդոս անկէ բերել տալով կանգնել տուաւ զայն այս ձիարձակարանին մէջ 390 թիւին Քրիս-

տոսի արեւմտեան կայսրութիւնը յափշտակող Մաքսիմի վրայ տարած փայլուն յաղթութենէն ետքը:

Կոթողին եօթը ոտք պատուանդանին վրայ կ'երեւին Թէոդոս իր գահուն վրայ բազմած իր տիկնոջը հետ, այլուր ընդունելով իր թշնամեաց հպատակութիւնը ու իմբական մրցութիւնները, թագադրութիւնն եւն.: Պատուանդանին մէկ կողմը կը կարդացուի նաեւ հետեւեալ արձանագիրը յունարէն եւ լատիներէն:

«Թէոդոսիոս միսիայն մարդը՝ որ կրցաւ կանգնել այս չորեքանկիւն կոթողը, երկրի վրայ ձգուած այս գործը յանձնեց Պրոկոպի եւ այսպէս կանգնեցաւ երեսուն երկու օրուան մէջ»:

Երկրորդն է պղնձէ օձերու սիւնը երեքգլխեան որ փոխադրուած է, ինչպէս վերը յիշեցինք. Դեղփական մեհնանէն Մեծն Կոստանդիանոսի միջոցաւ: Անոր վրայ էր դեղփական հարցուկին եռտանին, զոր հին Յոյներ նուիրագործած էին Ապողոնի՝ Պլատէայի ճակատամարտին փառաւոր յաղթութենէն ետքը: Հիմա միայն կը մնայ երեք գալարեալ օձերուն վարի կէսը: Օձերուն մէկ գլուխը կը գտնուի **Տէպիսանէ** մէջ, միւս երկուքը 1700ին գիշերանց գողցուած են:

Բայց Հերոդոտոս մեծ պատմագիրը այս յիշատակարանին համար հետեւեալը կը գրէ. «Պլատէայի յաղթութենէն ետքը, Յոյները հաւաքելով բոլոր դրամները, անոր տասներորդ մասը նուիր-

րեցին Դեղփական դից: Անով շինեցին ոսկիէ եռօտանի մը եւ ձօնեցին զայն Ապողոնի: Այս եռօտանին զետեղուած էր եռագլուխ պղինձէ օձին վրայ, որ բազինին առջեւ դրած էր: Դիողորոս Սիկիլիացին կուտայ անոր վրայի արձանագիրը այսպէս. «Մեծն Յունաստանի ներկիչները նուիրադործեցին այս եռօտանին, անարգ ստրկութենէն ազատելէն ետքը դաշնակից քաղաքները (Դիողոր գիրք ժԱ.): Նոյնպէս կը յիշէ նաեւ Պաւսանիաս:

Երրորդն է վաղեմի բարձրաբերձ քար կոթողը որ շինուած է բազմաթիւ քառակուսի քարերէ՝ որոնք, կ'աւանդուի թէ, արեւելեան կայսրութեան բովանդակ քաղաքներէն բերուած են անոնց թիւին զուգաչափ: Նախնի ժամանակները կատարէն մինչեւ յատակը ծածկուած էր ոսկեզօծ պղինձէ տախտակներով, բարձրութիւնն է իննսուն չորս օտք: Յունարէն արձանագրութիւնն էր այսպէս. «Այս սքանչելի քառակուսի քար կոթողը, որ վնասուած էր երբեմն, Հռոմայեցւոց Հայր Կոստանդին կայսրէն վերանորոգուեցաւ եւ եղաւ գեղեցկագոյն առաջինէն աւելի: ձիշդ, ինչպէս որ Հռոգոսի Տոկայ արձանը կանգնած էր հոն մարմարեայ, այս արձանն ալ հոս կը կանգնի պղինձեայ»: Կ. Պօլսոյ առումէն ետքը, պղինձէ տախտակները վերցուեցան, որով հիմա այս քու կոթողը չոր եւ մերկ կ'ախքի մը երեւոյթն ունի: Զայն կաղմօղ քարերէն ոմանք ինկած են, որով ծանրութեան կեդրոնը շրջելով կը վախցուի որ հոսի եւ կործանի:



Շատ հետաքրքրական է գիտնալ մանաւանդ կրանիդեայ միակտուր եգիպտական կոթողին արձանագրութիւնը, բայց շատ ալ դժուարին: Յարդոց ուրեք հանդիպած ենք անոր մեկնութեանը, կ'ըսէ Մըմրեան, միայն ներհուն անգլիացի մը անոր հարաւակողմի երեսի մեհենագիրներուն թարգմանութիւնը կուտայ մեզի հետեւեալ նորագոյն տեղեկութեամբ. «Փարաւոն Մերիս՝ շինողն այս կոթողին կը թագաւորէր եգիպտոսի մէջ Քրիստոսէ 1736 տարի առաջ, եւ 437 տարի առաջ Աբրահամու եգիպտոս մտնելէն: Այս Մերիս էր որդի Ամենաս թագուհին. ինքն էր հինգերորդ թագաւորը թեփական 18րդ ցեղին որ եգիպտոսէն դուրս վանեց Հիւքսոս հովիւ թագաւորները: Կ. Պոլսոյ կոթողը՝ Եփրայեցւոց եգիպտոսէ ելբէն առաջ է, եւ գոյութիւն ունի առնուազն 3645 տարիէ ի վեր: Անոր վրայի մեհենագրօլ արձանագրութիւնները զանազան ժամանակներու կը պատկանին եւ կը վերաբերին քանի ժը եգիպտական փարաւոններու:

Այս յիշատակարանին հարաւակողմի արձանագրութիւնը որ է հետեւեալն աղօթքը. «Իիք Բիթահ Սուքարիս» Շնորհէ կարողութիւն եւ աստուածային իմաստութեամբ առատացո՛ւր ազնուական թագաւորին, ո՛վ պահապանդ Արեգակ, արթուն եւ արդար Արեգակ, յաւիտեանցուցիչ կենաց: Ուղղէ՛ ա-

նոր ներքին խորհուրդները, այնպէս որ ամէն բանի մէջ նա ըլլայ գործօն եւ արդարս — Ո՛վ վսեմ իմաստութիւնդ, շնորհէ անոր քու էութեանդ սկզբ բռնք, քու լոյսիդ տարրը, այնպէս որ նա կարենայ իր ասպարէզին դժնդակութեանց մէջ հաւաքել պտուղներ (արժանի)։— 2 որս անգամ այսպէս կը պաղատի ինք քեզի յատկապէս, ո՛վ բովանդակ ժամանակաց հսկողդ Արեւակ արդարութեան։ Ինչե՛ր քեզի եղած այս պաղատանքը լսելի ըլլայ Շընորհացդ։— Եւ այս թարգմանութիւնը եղած է նրկատելով մեհնադրոշմ գերբը իբրեւ գաղափարագիր։ Այս բնագիր աղօթքը պարզ ու վսեմ է, միայն թարգմանորին ընծայուած տիտղոսները չեն վայլած անոր աղերսաւորի հանգամանքին։ Հին թագաւորները չէին բնաւ խիղճ ընք իրենց վրայ առնելու անվայել եւ պոռոտ տիտղոսներ, ինչպէս քուրմերը սնտի յաւակնութիւններ կը մատակարարէին անոնց։ Ըստ այսմ երբ Պողոսէոս Եփեսոսէ մէկ քանի առանձնաշնորհմանք տուաւ եղիպտոսի քուրմերուն, ասոնք անմիջապէս չվարանեցան աստուած հրատարակել զայն։

Չիարձակարանին հին ատենուան զարդերն էին նաեւ նշանաւոր չորս մետաղախառն ոսկեզօծ ձիերը, որոնց շուրջը քաշուած էր վանդակորմ մը՝ որուն կրթնելով հանդիսատեսք կը դիտէին մրցախաղերը։ Ըստ Բոնիարէսի՝ «անոնք էին ոսկեզօծ պղնձէ ձիուն եւ ճապոնկ տարազով ձգտեալ՝ հրանըկար իրարու երես նայելով»։

Կենթադրուի որ ասոնք Հռոմայ ճերակոյտին կողմէն բերուած էին Կորնթոսէն եւ դրուած էին Հռոմի մէջ, նախ Ներոնի, ապա Տրախանոսի յաղթակամարին վրայ։ Ետքը տարուեցան դրուեցան Արեւակի մեհնանը, ուրկէ մեծն Կոստանդիանոս բերելով իր **Նոր Հռոմ** քաղաքը (Կ. Պօլիս) զիտեղեց զանոնք Չիարձակարանի յօրինուած վանդակներու ետեւ։ Ուրիշ պատմիչներ կ'ըսեն թէ Կըրոսերն թէոդոս բերաւ զանոնք։

Երբ 1203ին արեւմտեան ազգերը օգնելու համար Իտալիայ Ալեքսիսի որդւոյն, այն սոսկալի պատժոյ խարապանին Բիւզանդիոն երկրին, դիմեցին Կ. Պօլիս ազատելու Սկիւթացիներէն որոնք թաթարներէն աւելի բարբարոսութեամբ աւերեցին եւ աւարեցին ընդհանուրը՝ զոր Բոնիարէս եւ Ակրոքոլիգոս կը պատմեն ողբագին։ Այն ատենն էր որ վենետիկցիք շատ մը թանկագին բաներու հետ՝ այս պղնձէ ձիերն ալ առին տարին վենետիկ եւ զետեղեցին Ս. Մարկոսի եկեղեցւոյն առջեւ։ Յրանսական յեղափոխութեան ատեն 1797ին Իտալական պատերազմին՝ այս ձիերը Բարիզ տարուեցան ի փառս յաղթական պարձանաց Յրանսայի Բայց Տետեւորդ կայսրութեան ատեն Նաբոլէոն դնել տուաւ զանոնք Գարուսէլի յաղթակամարին վրայ եւ 1815ին Նաբոլէոնի անկումին վերջնապէս տարուեցաւ Վենետիկ ուր մնացին այնուհետեւ։

Այս ձիերը յօրինուած էին այն հռչակուած խառնուրդէն պղնձի, ոսկիի, արծաթի, որուն անունն էր **Կորնթական պղինձ**։ Կորնթացիք գետէն գաղտնիքը այս խառնուրդին շատ հին ատեններէ եւ այդ արուեստը սորված են նախայոյն արուեստաւորներէ, բայց յունական անկումը

պատրաստող մորրկայոյզ դէպքեր եւ յեղափոխութիւններ աներեւութացուցած էին զայն. անկէ մինչեւ այսօր միայն այդ ձիերուն խառնուրդէն ծառայութ է նիւթը այդ հնագոյն արուեստին:

ԿԱՐԱՊԵՏ ՊՕՏԻԿԵԱՆ

Օգտակար գիտելիք. — ԱՐՄՄԻ. — Ամէն երկիր և աշխարհամաս իր յատուկ պտուղը և ընդեղէնը ունին: Հնդկաստան բրինձ կը բուսցնէ, Հարաւային Յմերիկա Եգիպտացորեն, մեր երկիրը առատ ցորեն, բայց Արարիա ի՞նչ ունի: Այն անչորի և ծայրածաւալ աւազներուն մէջ կա՞յ միթէ հասոյատեսիլ և աննդարար ուտելիք մը:

Պէտնարդէն տը Ս. Բիէն կը յայտարարէ թէ բնութեան մարդոց հայթայթած լաւագոյն պտուղը արմաւն է: Չէ թէ միայն որովհետեւ սալորի և յունապի հոյզի նման սքանչելի խիւս մը կը պատրաստուի անոով, այլ և թորերու բորբորման մէջ խիարեր և մազասահան է նաև առողջարար սնունդ մը:

Արմաւը ոչ միայն արարացիին սնունդն է, այլ նաև սնունդն է ուղտին և ամէնէն ազնիւ արար ձիերուն: Այսու հանդերձ եթէ մէկը կ'ուզէ արմաւով սնանիլ, պէտք է գիտնայ արմաւին ընտիր տեսակը ընտրել, ինչու որ շատ տեսակ արմաւներ կան. դարձեալ սաստիկ բամիէ վերջ բաղուած արմաւը ըլլայ հատուն կամ խակ բան մը չարժեր: Վերջապէս պէտք չէ շատ հինցնել, ոչ ալ եւրոպական վաճառորդներու ծախած պտուղներէն դատել արմաւը, բանի որ ազնուագոյն պտուղները տեղոյն վրայ կ'սպառին:

ՊԵՅՈՒԹԻ ՉՈՅԳ ՀՍՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԸ



Ամերիկեան համալստեան, հաստատուած՝ 1866ին, Ծովահայեաց փառայեղ շէնք մը, կը գտնուի բաղաբին արեւելեան կողմը, Բաս Պէյրուք կոչուող բարձունքին վրայ, և որու ընդարձակութիւնը ամբողջ թաղամաս մը պիտի կազմէր, այլ առանձնացած ու մէկուսի կը դիտէ Լիբանանեան բնարուեստական տեսարաններն ու Մեծն Լիբանանի մայրաքաղաքը իր բազմապիսի նարտարարուեստովը:

Համալսարանին յատակագիծը ցրուած բաժանուճներով կազմաւորուած է: Տասնի մօտ շէնքեր կը կազմեն ամբողջ հաստատութեան կմախքը: Ընդարձակ և մասնաւոր հոգածութեամբ զարգացած պարտէզը՝ իրական վայելք մը կը պարգեւեն անոր մէջ բնակող խոստմնաւոր սերունդին համար:

Բժշկական, ղեղազորժական, ատամնարուժական, վաճառականական ճիւղերը առանձինն յարկաբաժիններու մէջ կը զասուանդուին և երբեք միտական երեւոյթներ չեն ստեղծուիր ազատ արուեստեաններու միջև:

Հիւանդանոցը (որ միանգամայն բոլոր հասարակութեան օգտին կը ծառայէ) հաստատութեանը մօտ՝ մէկուսի շէնք մըն է, նոյնքան ևս առաւել օժտուած ամէն կարելիութիւններով և անհրաժեշտ ստեղծագործութիւններով:

Վերոյիշեալ հաստատութեան կ'աշակերտին ամէն տարի հարիւրէ-աւելի հայ ուսանողներ, իսկ օտար աշակերտներուն հակակշիռը կազմել դժուարին պիտի ըլլար, երբ աչքի առչև ունենանք անոնց ցեղային տարբերութիւնները: Գրեթէ ամէն ցեղէ և ազգէ աշակերտներ անպակաս կ'ըլլան յիշեալ հաստատութենէն ներս. օրինակ՝ Սուրիացի, Եգիպտացի, Հայ, Պաղեստինէն, Պարսկաստանէն, Ռուս եւ այլ զանազան տեղացիներ ու ցեղեր. նոյնիսկ, ամերիկացիներ:

Պէյրուքի Ամերիկեան համալսարանը, մինչև թուականս, հարիւրներով հայ բժիշկ, դեղագործ, ատամնաբոյժ, վաճառագէտ մասնագէտներ պատրաստած է:

Կ'արժէ՛ նաև հաստատութեան ներքին բաժանումներու մասին զաղափար մը տալ ընթերցողներուն:

Համալսարանը ունի առանձինն յարկարաժին մը՝ լոկ հնագիտական ճիւղին յատկացուած, ուր տեղ կարելի է գտնել հնութեանց վերաբերեալ ամէն տեսակ հետաքրքրական առարկաներ, ինչպէս նաև, բուսային և կենդանարանական այլեւայլ գիտելիք օրինակներ, որոնցմէ պիտի կրնար օգտուիլ ամբողջ աշակերտութիւնը: Այս տեղը, հնագիտական, բուսական և կենդանարանական կատարեալ թանգարան մըն է:

Միւս կողմէ ուշադրութեան առնուելիք պարագայ մըն ալ, համալսարանի վիրաբուժական և ատամնաբուժական զատ զատ յարկարաժիններն ու դարմանատունները կը կազմեն, ուր տեղ, աշակերտներուն դիւրութիւն մը ըլլալու համար, փորձառական դասաւանդութիւններ տեղի կ'ունենան յաճախ և ուսանողութիւնը մեծապէս կ'օգտուի սոյն առիթէն:

Համալսարանը ունի նաև թատրոնի ընդարձակ սրահ մը, զբօսավայր մը և մարմնակրթական յատուկ տեղեր: Այս բոլոր նկարագրուածները իրենց վայելութեամբն ու յարմարութիւններովը անմրցելի են:

Փրանսական համալսարան, հիմնեալ 1883ին, կը գտնուի Պէյրուքի հարաւ-արեւմտեան կողմը, Ֆուրն-Էլ-Շրպէք երկար պողոտային՝ կամ զծին վրայ:

Հոս եւս հայ աշակերտներ կը յաճախեն և մինչև ցարդ՝ հարիւրաւոր շրջանաւորտներ ունեցած է, առանց հաշուելու օտարազգիները:

Պէյրուքի ֆիհնս. համալսարանը կարողագոյն բրօֆէսօրներու ձեռամբ կը կառավարուի և ենթակայ է հովանաւորող կառավարութեան մասնաւոր հսկողութեանը: Ասկից շրջանաւարտ եղողները տիրացած կ'ըլլան լաւագոյն ապագայի մը, և իրենց ճիւղին մէջ օրըստօրէ յառաջանալու ընդունակութիւնը կ'ունենան:

Բժշկական ամբողջ շրջանը 5 դեղագործական և ատամնաբուժական շրջանները 3 տարիէն կ'աւարտին:

Բաղդատմամբ Ամերիկեանին՝ Պէյրուքի Փրանս. համալսարանը, տեսարանի տեսակէտով՝ նուազ արժէք կը ներկայացնէ, այսուհանդերձ, անիկայ եւս օժտուած շատ մը առաւելութիւններով:


Վերջացնելէ առաջ, արդար ըլլալու համար կ'արժէ խոստովանիլ թէ՛ Պէյրուքի վերոյիշեալ զոյգ համալսարանները բաղաբին եւ բնակչութեանը մեծ ծառայութիւններ կը մատուցանեն, և Սուրիացի ժողովուրդը շատ բան կը պարտի անոնց:

Պէյրուք

ՄԻՀՐԱՆ Ս. ՆԱՃԱՐԵԱՆ

ԱԶԳ. ՄՇԱԿՈՅԹ ԾԱՅՐԱԳՈՅՆ ԱՐԵՒԵԼԻՔԻ ՄԵՉ

Յ. ՏԵՐ Կ. ՅՈՐԴԱՆԱՆԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ



Ազգ. մշակոյթի ժիր պաշտօնեայ այս վաստակաւոր անձը կը փափաքիմ ծանօթացնել Տարեցոյցիս ընթերցողներուն իբր օրինակ ուրիշներու որ նոյն ուղղութեան հետեւելով օգտակար հանդիսանան կրթական ասպարէզին մէջ:



Յ. ՏԵՐ Կ.
ՅՈՐԴԱՆԱՆԵԱՆ

կան դպրոցներուն: 1876ին կ'երթայ Բոմբէ, ուր հայրը վիճակաւոր քահանայ էր, հոն կը յաճախէ ժամանակ մը Անդր. վարժարան, յետոյ կը յղուի Կալկաթա, այս միջոցին հայրը Նոր-Ջուղա վերադարձին Պուշրի մէջ կը վախճանի եւ տղան ընականաբար որբ կը մնայ օտար երկրում:

Բարեբախտաբար Պ. Խ. Թովմասեան անուն ազգաւոր անձի մը շնորհիւ 1877ին Կալկաթայի մարդասիրական ճեմարանը կը մտնէ իբր մին 12 սաներէն կրթական հիմնարկութեան Բատաւիայի Մանուկ եւ Յարութիւնեան երջանկայիշատակ երկու քերջ կողմէ հաստատուած: Հայերէն գրաբարը եւ Անդրիերէնը կ'աւարտէ 1880ին: Յետոյ նոյն ուսումնարանին մէջ երեք ամիս օգնական ուսուցչի պաշտօն կը վարէ: Տարի մը վերջ կուգայ Բատաւիա, միջոց մը վաճառականութեան ասպարէզը կը մտնէ եւ այս առթիւ ինքնաշխատութեամբ Հոլանտերէն լիզուն կը սերվի, ինչպէս նաեւ յետոյ Ֆրանսերէն եւ Գերմաներէն եւ վերջապէս 1884ին կուգայ Սուրբաբայ, ուր կը մնայ ցարդ:

Վաղուց մի հայ յարմար ուսուցչի պէտքը կ'ըզգացուէր հայ մանուկներու համար նոյն տեղ, 1886ին սկիզբը ուսուցչի պաշտօն կ'ստանձնէ. երեկոները վեց ընտանիքի տուն յաճախելով եւ 12 ասորի անընդհատ կը շարունակէ այս պաշտօն եւ ի վերջոյ կ'օտարուի հրաժարիլ հիւանդութեան պատճառաւ: Այն ատեններ, այսինքն 30—40 տարի առաջ յարմար դասագրքերու պակասը մեծ էր, ուստի սորվուած կը ձեռնարկէ պատրաստել նախակրթարանի դասագրքեր Հոլանտերէն դրքերու հետեւողութեամբ տպագիր եւ ձեռագիր միասին. 5 մեթոտ կ գրքայիններ, որոնք վերջը լոյս տեսած են վիեննայի Միլիթարեանց տպարանէն եւ Ջուղա-

յի մէջ լաւ ընդունելութեան արժանացած: Յօրինած է նոյնպէս երկու գրքոյկներ եւս, մի համադատ քերականութիւն եւ մի զուարճալի պատմութիւն, բառերու նշանակութիւնը Հոլանտերէն, լոյս տեսած վեհնետոյ Միխիթարեանց տպարանէն:


Ուսուցչութիւնէն հրաժարելէն ետքը քանի մը տարի Հայ տղայք մնացած էին առանց հայերէնի ուսման: Ցաւ էր իրեն որ առեւտրական զբաղումներով չէր կրնար կանոնաւոր դասաւանդութեան նուիրուիլ: Հայ երեխաներու մայրենի լեզուէն զրկումին չկրնալով հանդուրժել 1911էն սկսեալ մի քանի տարիներ 15—16 երկսեռ տղայք շաբաթը քանի անգամեր հաւաքելով կը սորվեցնէ:

Վերջին 10 տարիներուն քաղաքին Հայ դպրութիւնը բաղմանալով յատուկ հայ դպրոցի մը պէտքը չափազանց կ'ըզացուէր: 1923ին վերջը յաջողութեամբ «Բատաւիայի Մ. Յ. Ուսումնարան» հիմնարկութեան որպէս մի ճիւղ բանալ Սուրբաբայայի մէջ 35 աշակերտներով: Այս կրթարանի աւագ ուսուցիչն է Պ. Յ. Տէր Կ. Յորդանանեան, իրեն գործակից են Տիկ. Բ. եւ Օ. Մ. ուսուցչուհիներ:

Այս քանքարաւոր ուսուցիչը՝ նուիրուած խանդով բոցավառ՝ ներկայիս Սուրբաբայայի կրթութեան առաքեալն է եւ աշխարհի այս հեռավոր անկիւնը եղող նորահաս սերունդները երախտապարտ են այս անխոնջ մշակին:

Ի որի՞ն յարգանք անոր ազնիւ ջանքերուն:
Ս. Գ.

ԶՄԵՌԸ՝ ԱՌԻՓ ԲԱՐԵԴՈՐԾՈՒԹԵԱՆ



Զմե՛ռ, ամէն կողմ ձիւն և սառ, այս եղանակին թռչուններն իսկ իրենց բոյներէն զուրկ, վասն զի պուրակին թաւուտը ձիւնապատ է, հոս հոն կը թռչկոտին իրենց ապաստան գտնելու յոյսով, ոմանք ալ պատերու վրայ գոյացած ձերպերուն շնորհիւ զերձ կը մնան ցըրտահար ըլլալէ: Զգայուն սրտեր ի տես օդի բնակիչներուն վատարախտիկ վիճակին կը յուզուին: Այլ սակայն ո՛րչափ աւելի մարդ կ'արգահատի եւ կը յուզուի տեսնելով այն բախտին անժառանգեալներ՝ որոնք զուրկ ամէն դիւրակեցիկ պայմաններէ կը տառապին չարաչար: Ո՛հ, այս տեսարանին առջեւ բարեխիտ մէկը բոլորովին այլ յայմէ եղած կը խռովի և այդ յուզումներուն վէջ խորասուզուած՝ իր միակ մտածումը կ'ըլլայ օգնել թշուառին ու հիւանդին: Երանի՛ անոր՝ որ Սամարացիին նման անկեալին ձեռք կը կարկառէ, Այսպիսիներ արժանի են Աւետարանական երանութեանց և Աստուծային փառաց:

Ապրի՛ն, հազար ապրի՛ն այդպիսիներ, որոնք նախախնամական բարիքներ կը սփռեն և կեանքեր կը փրկեն. բայց, աւա՛ղ, կան նաև այնպիսիներ՝ որ անկարեկիր թշուառին, իրենց լսելիքը խցած են ամէն ազէկտուր ողբերու և տաքուկ սենեակներու մէջ՝ իրենց կերուխուովին, զուարճութիւններուն և հաճոյքին անձնատուր են, Ո՛վ դուք, սթափեցէք այդ անարգ կենցա-

զի թմրութիւններէն. հակառակ պարագային գիտցէք թէ խղճի խայթը զձեզ ցվերջ պիտի տանջէ և պիտի զըրկուիք աստուածային փառքերէն և Ս. Աւետարանի պարգեւներէն ու բարիքներէն. Երանի՜ անոնց՝ որոնց սրտի սլաքը կը դառնայ դէպի բարեգործութիւն: Գթութեան գործ մը ջերմեռանդ աղօթքի սէս աստուածահաճոյ է:

Արդ, սիրելի ընթերցողներ, կը հարցնեմ ձեզ, հանդէպ թշուառին ցոյց տրուած սա երկու կերպ վերարեբուժներէն ո՞րը կը նախընտրէք. անշուշտ առաջիններունը, ո՞ն հետեւինք անոնց և ջանանք օգտակար ըլլալ և իբր գթոյ հրեշտակներ թռչինք դէպի հոն՝ ուր արցունք մը պէտք է սրբելու իրապէս աղքատին օգնութեան հասնելուն և զանի ուրախացնելուն պէս բաղքը և հոգեկան զրօսանք մը, մարուր հաճոյք մը կարելի՞ է երեւակայելու: Ո՛վ բարեսէր ընթերցող, ունինք Ազգ. Հիւանդանոց մը, որբանոցներ և ինամատարական ու աղքատախնամ մարմիններ՝ ահա անոնք ձայն կուտան մեզի օգնել իրենց:

Ուրեմն կատարենք մեր պարտքը և Աստուած որ աղբիւր է ամէն բարութեանց, ինքը վարձահատոյց ըլլայ իր անսպառ զանձէն և բարութեանց մշտանոս աղբիւրէն բոլոր ողորմածներուն, պահելով զԱշխարհ ամենայն խաղաղ և երանաւէտ վիճակով իր ամենազօր Աշին ներքև:

ԱՐՐԱՆԱՍ ԱՒԱԳ. ՔՂՆՅ. ԷՊԷԱՆ

14 Հոկտ. 1927

Ի ԳՆԱԼԸ

ՈՐՈՎԱՅՆԱՊՆԴԱԲԵՐ

ՊՏՈՒՂՆԵՐ

Պտուղները կը գտնուին առողջապահական սննդաուսթեան առաջին շարքին վրայ եւ կը վերաւեն ներկայիս, կաթնա-բուսա-պըտղակերութեան ճաշացանկին ամենապատուաբեր մէկ անկիւնը:

Ամէն անհատ՝ բաւականաչափ զարգացած, կամայ թէ ակամայ, քիչ շատ վարժուեցաւ անմսակերութեան կամ սակաւամսակերութեան: Մենք ամէնքս ընդհանրապէս, ամառ թէ ձմեռ, կը գոհանանք չորս-հինգ տեսակ բանջարեղէններով եւ պտուղներով: Եւ երբ զգուէնք ասոնցմէ, փոփոխամտական ու նորաձեւական յոռի հոսանքներէ մղուած կը դիմենք ու կը փարինք պահածոյ, աղածոյ կամ ներածոյ խոզեղէններու եւ տեսակ տեսակ դժուարամարս ու թունաւոր մանուկներու, փոխանակ—ինչպէս կ'ըսեն գիւղացիները—օգտուելու մայր-բնութեան պարարտ ու լայնատարած ծիծերէն առատաձեռնորէն հոսող բնասնունդներէն:

Քանի որ արդի բժշկագիտութիւնը՝ բնախօս սական, ախտաբանական ու բնատարրալուծական

հաստատու ապահով, հակակշռուած տուեալներով լրայ կառուցուած կը յանձնարարէ բուսակերութիւնը իր բոլոր ճիւղերով՝ ինչո՞ւ չջանանք օգտուել, մեր շուրջը առատօրէն տարածուած անթիւ անհամար բուսաբանական հարստութիւններէն որոնք մեզ կը հայթայթեն ամենադիւրամարս վիճակի մէջ մարդկային կեանքի անհրաժեշտ տարրերը: Արդէն ասոնք մեզ կը նուիրեն՝ բնասպիտային, ճարպային (ձէթ, բուսաիւղեր), ջրածխային (ալիւրներ, շաքարներ, ալքոլներ, խէժ, եւլն. մարսիներ, ինչպէս նաեւ կենսապարզեւ թթուութեան, աղեր, իսկութիւններ, գետին, աղաղ եւ կենսունակներ կամ վիթամիներ անհաշիւ որոնց աղբիւրներն են կենդանութեան՝ հողային անասնանի կերակները, արեւուն լուսափայլ, առողջարար ու գունագեղ ճառագայթները եւ երկնակամարի կապոյտ մթնոլորտը թարմ ու անապակ:

Մեր ծննդավայրը մեզ կը պարզեւէ շուայուրէն առողջութիւն թեւատարած իր ճոխ ու մրգաշատ, կիրթ ու անկիրթ, ընտանի եւ վայրի, թուփ ու ծառերով, տունկ ու տերեւներով:

Ինչո՞ւ, կ'ըսենք, այս բացառիկ առիթէն օգուտ էքաղենք լրջօրէն հիւանդանալէ առաջ մասնաւոր:

Աւելորդ պիտի ըլլար, այս պարագային կըրկուել, ինչ որ կրկնուած է աշխարհիս սկիզբէն ի վեր գրող-կարգացողներէն ու մեր մամիկներէն թէ՛ շատակերութիւնը միշտ վնասաբեր է ախտահար-

ւէր: Որով պողպակերութեան շրջան ու միջոցին ալ, պէտք է նկատողութեան առնել ու գործադրել բնականոն ճաշակերութեան կարգուկանոնը, տեղն ու պատշաճութիւնը, չափն ու կշիռը:

Պէտք չէ մոռնալ նմանապէս թէ իւրաքանչիւր կազմ ու կեանք ունի առաւել կամ նուազ աստիճանով մարտողականութեան ինքնուրոյն չափանիշ մը, որով՝ պտուղներու դասակարգութիւնն ու ընտրութիւնը կը կարօտի՛ խլճամիտ մասնաւոր հակակըշուի մը:

Աւելցնենք նաեւ որ պտուղները թէ՛ սնունդ են եւ թէ դեղ մասնայատուկ կազմութիւնով եւ անջատ անջատ բաղադրութեամբ. այս պատճառաւ, իբր սնունդ եւ իբր դեղ կը պատշաճին ու կը յանձնարարուին պարագաներու բերմամբ մանուկներու, պատանիներու, չափահասներու կամ ծերերու:

Մեր համակրելի հայկաբան եւ ուսուցիչ Տիար Ս. Գաբամաճեանի Տարեցոյցի արգասաբեր գետինը, իր փոքրածաւալ հիւթեղ ու պողպաբեր էջերով թոյլ չի տար որպէս զի պտուղներու վրայ ծանրանանք երկարօրէն:

Բաժանում մը անհրաժեշտ է:

Առ այժմ նախընտրեցինք պնդաբեր պտուղները, որոնց մէկ հակիրճ տեսութիւնն ու թուումը կը յանձնարարուի մասնաւորապէս կարճատեւ կամ յաճախակի սրովայնածութեան են-

թակայ ընթերցողներու, ինչպէս նաեւ ասոնց վի-
ճակակից մեծ ու փոքրերու:

*
**

1. Սերկեւիլ.— Թագուհի պնդաբեր պտոճղ-
ներու: Թուրքերէն՝ ալլա, յունարէն՝ բիտհոնի,
ֆրանսերէն՝ բուան (coing):

Ծառը կը կոչուի սերկեւիլ կամ սերկեւիլ: Տե-
րեւներն են ճուռձեւ, ամբողջ եղրներով, ստորին
երեսը մազոտ: Ծաղիկներն են սպիտակ, կարմիր
կամ բաց վարդագոյն: Սերկեւիլն է բնիկ փոքրա-
սիացի, ապա ընտելացեալ Եւրոպա եւ Ամերիկա:
Պտուղն է դեղին, հոտաւետ, լիմոնակերպ, տան-
ձաձեւ, փորեղ, կարծրակեղ, մէկ ու կէս, երկու միջակ
լեմոնի խոշորութեամբ. բացառաբար կ'ստանայ
գլխու մեծութիւնով ծաւալ մը, միշտ ազուամա-
զերով արտաքուստ շրջապատեալ:

Սեր մէջ գլխաւոր երկու տեսակ կայ՝ սովոր-
բական, թթուաշու ու կծուահամ երկնիկ սերկեւիլը
դեղձանիկի գոյնով (ելիմոն ալլասը) եւ քաղցրա-
խորժ, կակուզ ու գնդաձեւ դեղնորակ կամ կա-
նանչիկ մասնատեսակը (էքմէք ալլասը): Եւրո-
պացիներն ալ երկայնաձեւ կամ բորթուգալեան եւ
տանձաձեւ վանազանակներու՝ կը բաժնեն սերկե-
ւիլները:

Սերկեւիլը կը պարունակէ՝ հարիւրին եօթը շա-
քար, մէկ սպիտային, 19՝ հիւսուածային խորշանիւթ

(cellulose), կէս կէս կրամ եռատարրեան ջրած-
խային մարմիններ, թթուութներ եւ 71 առ հա-
րիւր ջուր: Կը պարունակէ նաեւ առատ աղաղ
(tannin), որուն շնորհիւ այս պտուղը կը ներկայա-
նայ իբր առաջնակարգ սնունդ պնդիչ, կապող
կամ սեղմիչ աղեաց: Իր մէջ ունի նաեւ սառնորակ
կամ բխի (pectine) որ է հանդարտեցուցիչ եւ կը
կակղէ եւ կը թուլցնէ մարտողական ճամբանե-
րու սալայատակը կազմող հուղաթաղանթները,
եբբ մանաւանդ ձգտեալ են եւ բորբոքած:

Այսպէս աղաղը՝ աղաղական թթուութիւն—հա-
կալուծողական—եւ սառնորակը կամ բխի՝ դոն-
դողիտի կամ դոնդողի (gélatine) դերը կը կատա-
րեն եբբ սերկեւիլը իր գնացք ու առաջխաղացու-
մով կը ճամբորդէ ստամոքսաղիքային փապուղիին
մէջ:

Այս կազմութիւնով եւ բաղադրութիւնով սեր-
կեւիլը կը յանձնարարուի միշտ մասնաւորաբար
փափկակազմ, նորաբոյժ մանուկներու եւ ծերերու
եւ առհասարակ աղիքներու տկարութեանց ու
փորճարութիւններու ենթակայ անձերու:

Ով որ աղաւալիկ չէ եւ ունի ի ծնէ առողջ ու
հաստատ աղութներ կրնայ ծամել ու ճաշակել
սերկեւիլը ծառէն նորաբաղ վիճակով: Լաւ է եւ
լաւագոյն դիւրամարս՝ քերիչով խարտուած եւ
կամ եփած փուռը, մոխրի մէջ կամ միս ու մսա-
ջուրով:

Յանձնարարելի են նամանաւանդ բանդակը

(compote), դոնդողանուշը (լողապ, gelée), զանգուածանուշը կամ խիւսանուշը (pâte), եւ քաղցրաւենին:

Սերկեւելի եռոյթը կամ խաշջուրն ու օշարակը հարստացած հոտաւէտ ու համեմային նիւթեքրով (եղեսպակ=ատա չալը=sauge, անանուխ=նանէ=menthe, կալամենթ կամ վայրի անանուխ = եւպան նանէսի=calament, կինամոմոն կամ դարիճենիկ=տարչին = cannelle). խիստ օգտակար են իբր զովացուցիչ ու պնդաբեր:

Փորելուքի պարագային գործածելի խիստ լաւ միջոցն է սերկեւելի խաշուռն (opozème) որ կը պատրաստուի հետեւեալ կերպով: Մէկ սերկեւելը կտրել շերտ շերտ կեղեւով, եփել մէկ լիտր ջուրի մէջ մինչեւ որ կիսով պակսի, մաղէն անցընել քամելով, աւելցնել 50 կրամ շաքար:

Փորհարութեան դէմ լաւ դեղ մըն է նաեւ սննդարար, մեղրախառն սերկեւելի անուշը (melimda, լտ. melimelum, ֆր. mélimèle): Պատրաստութեան եղանակը շատ պարզ է: Մէկ քանի սերկեւել շերտ շերտ կտրուած թողուլ 2-3 օր պաղ ջուրի մէջ մինչեւ որ կիսաթափանց դիճակ մը ստանայ: Եփել ջուրով, յետոյ շարել եւ թողուլ մէկ քանի ժամ լաթի մը վրայ որպէսզի հեղուկ մասը քաշէ կաթկիթելով: Մեղրով երկրորդ եփ մը հանել եւ դարձեալ շարելով ցամքեցնել մասամբ: Ամանի մը մէջ շերտերը իրարու վրայ շարել ու տեղաւորել

ու վրան լեցնել տաք մեղր: Երբ օր փափաքեք կերէք հաճոյքով եւ եթէ աւելնայ հիւրերու հրամացուցէք:

•••

Սերկեւելէ յետոյ յիշատակենք մէկ քանի որովայնասեղմիչ պտուղներ որոնք մեր բերնին մօտ գտնուելով կրնան հայթայթուիլ դիւրութեամբ ընդհանրապէս:

2.— **Ձկեւ** կեւ սգեւ կամ զղեար կամ զղեր: Թրք. մուշմուշ կամ տէօնկէլ. ֆր. Նէֆլ (nêfle): Եւրոպ կը կոչուի զկեւի կամ սգեւենի կամ զղեւենի: Տճկ. մուշմուշ աղածը, ֆր. Նէֆլիէ (nêflier): Ձկեւը է փոթոթիչ եւ պնդիչ: Խակ ու կարծրկեկ պտուղը առաւել աստիճանով սեղմիչ է: Տերեւներու խաշջուրն ալ նոյն յատկութիւնը կը կրէ:

Պտուղը կուտուի հում կամ խիւսանուշի ձեւով եւ կամ խաշուն պտուղով պատրաստուած կը գործածուի իբր դեղամիջոց միշտ լուծմունքի պարագաներու մէջ: Սեպտեմբերէն, Հոկտեմբերէն նոր բերքը կը քաղուի:

3.— **Չղալ** կամ **հոյլ** կամ **պրի** կամ **չում**: Տճկ. գըղըձըգ, ֆր. քորնուլ (cornouille): Եւրոպ կը կոչուի՝ զալարս կամ զոզալ կամ զոզալ կամ հոյլ եւ կամ չում: Տճկ. գըղըձըգ աղածը, ֆր. քորնուլիէ (cornouiller) կը յանձնարարուի մասնաւորաբար հասուն եւ հում պտուղը, օշարակը, բանդակն ու քաղցրաւենին:

Փնտուցէք եւ պիտի գտնէք չումը՝ Յուլիս, Օգոստոս, Սեպտեմբեր եւ Հոկտեմբեր ամիսներու:

4.— **Հագորան կամ սիճ, Տճկ.** իւվէդ, ֆր. azerole կամ alise, կամ corne կամ sorbe. յն. սուֆրու Ծառը, հագորենի կամ սնձի, տճկ, իւվէդ աղաճը, ֆր. azerolier կամ alisier կամ cormier եւ կամ sorbier:

Կերէք սինը հատուն, խիւսանուշի կերպով կամ համեմեալ խաշջուրը տհաս պտուղին խմեցէք երբ կը նեղուիք աղիքներու թուլութենէ:

Յուլիս Օգ.— Սեպտեմբերէն վերջ հագորանը կը հատուննայ:

5.— **Մարուզ, տճկ.** խօճա եէմիշի, ֆր. ar-house, յնր. ք՛ււմարա. թուրք կը կոչուի մաթզի կամ մաթզինի տճկ. խօճա եէմիշի աղաճը, ֆր. arbousier. պտուղը ելակի նմանելուն, կոչուած է նաեւ ծառելակի կամ arbre à fraise. պտուղ թթուաշ եւ դժուարամարս: Որով հուսմ պէտք չէ ճաշակել մեծաքանակ:

Յարգի եւ յանձնարարելի է քաղցրաւենին եւ բուսար, փնտեցէք եւ հաւաքեցէք Օգոստոսէն վերջ:

6.— **Հապալաս, տճկ.** եապան մերսինի, ֆր. raisin de bois, կամ airelle կամ hrimbelle եւլն:

Խիստ օգտակար, սննդարար, սեղմիչ աղիքներու եւ հականեխական մարսողական ճամբաներու: Երախաներու փորհարութեանց դէմ առաջնակարգ դեղ եւ սնունդ: Քաղցրաւենին, դոնդողանուշը, խիւսանուշը խիստ յարգի եւ առողջաբեր են: Գոր-

ծածեցէք նաեւ օշարակը, ալբուական երփնաջուրը: Առաջժմ այսքան թուլաղիքոտներուն համար:

Երբ պնդաբեր պտուղները կը յանձնարարենք փորհարութեան դէմ, չափազանցութեամբ պէտք չէ նկատել զանոնք միմիայն իբր դեղ հիւանդներու եւ տկարակազմներու: Պտուղը պտուղէ ամէնուն համար, որով պէտք է օգտուիլ անոր պարունակած գերազանցօրէն սննդարար ու վերակաղդուրիչ հիւթերէն ու տարրերէն, երբ առողջ ենք երեւութապէս:

ՏՕՔԹ. Ա. Ն. ՄԵՂՊՈՒՐԵԱՆ

Կենսագրական.— Յօդուածագիր բժիշկը, որդի հանրամանօք բժիշկ Ներսէս Ս. Մեգպուրեանի եւ Եղբորդին վաղեմի Մեգպուրեանի, ժառանգած է հայրենի ձիբեր իբր գիտութեան առաքեալ եւ իբր գերազանցապէս զարգացած անձնաւորութիւն. ծնած է Վոսփոյր, Սարեար 1879ին:



ՏՔ. ԱՐՅՕ Ն. ՄԵՂՊՈՒՐԵԱՆ

1888-1890 բուականներուն առած է իր նախնական կրթութիւնը Գասրգիւղի Արամեան վարժարանին մէջ, ուր բախ ունեցած եմ Հայերէնի ուսուցիչն ըլլալ իրեն եւ իր բարի հօր յօրինած յոյժ ժողովրդական երգին **ՈՎ ԱՆԾԱՄԱՆՆՆ ԴՈՒ ԼԵՂՈՒ** ին նաեակը սալ Արթօ պատանիին:

1888-1890 բուականներուն առած է իր նախնական կրթութիւնը Գասրգիւղի Արամեան վարժարանին մէջ, ուր բախ ունեցած եմ Հայերէնի ուսուցիչն ըլլալ իրեն եւ իր բարի հօր յօրինած յոյժ ժողովրդական երգին **ՈՎ ԱՆԾԱՄԱՆՆՆ ԴՈՒ ԼԵՂՈՒ** ին նաեակը սալ Արթօ պատանիին:

Ուսուցիչներն իմացական աշխարհի խոնարհ վե-
հապառներն են եւ երանի՛ այն ուսուցչին՝ որուն ան-
սեսանելի քաղը կը զարգարեն այսպիսի աղամանդ-
ներ: Իմ պատօճակիցներս էին նոյն ասեմ Մինաս
Ծալեան, Տնօրէն, Արեան, Տիրան Շալսեան, եւն., յետոյ
գիւերօթիկ աւակերս Իսկիւսարու Պերպլեան Վար-
ժարանի (1891—96), երջանաւարս 1896ին: Ուսուցիչ-
ներն եղան Ռ. Յ. Պերպլեան, տնօրէն, Ասֆանազ,
Յ. Սէքեան, Եր. Տէր Անդրէասեան, Սիմոնեան, Համ-
բարձում Պերպլեան, Ի. Մուրասեան, Մ. Արիկեան,
Առանձար, Ա. Նիկողոսեան, եւն.:

Ապա Փարիզ գոցած է հետեւելու բժշկական ուս-
ման, 1903ին բժշկական պատկաւորի վկայական քս-
սցած է:

Չիմուորական բժիշկ ընդհ. պատերազմի երջանին
բուրբ բանակին մէջ՝ Ռոստոքոյ, Կելիպոլու, Պիզա,
Էրեկ, Քէզան, Ուզուն Քէօփրի գիմուորական հի-
ւանդանոցներու մէջ:

Բժիշկ Մեգպուրեան բացի բժշկական ասպարէզի
պարտադրութիւններէն, իր պարապոյ ժամերը յատկա-
ցուցած է գրական-գիտական յորուածներու խմբա-
րութեան: Աշխատակցած է կանուխէն թերթերու, ներ-
կայիս Նոր-Լուրի մէջ իր օգտաւ գրութիւնները մեծ
ախորժով կը կարդօցուին միշտ:

Ինչ քաղը է այս առթիւ բժիշկ Մեգպուրեանի
նման գիտական քանքարով նոխացած գրութիւններու հա-
մար մաղթել անբարձում պատիւը աս երկար արիւն-
բու:

Ս. Գ.

ԱՆՏԻՊ ԷՋԵՐ

ՀՐԱՉԵԱՅ ՍՈՒՐԷՆԵԱՆԷ:

(ՎԱՂԱՍԵՌԻԿ A. SORIAN)

QUATRAINS



Ton âme n'est qu'un souffle, misérable humain,
Dans l'immense ouragan.— Ton corps est un atome.
Grain de sable, au hasard, jeté gans ce désert,
Tu n'es qu'une poussière et que le simoun perd..

Que je sois le palmier exténué, au désert,
Pour que ta pluie, enfant, me verse ton sxtase,
Que je sois, s'il le faut, ce simple gazon vert,
Mais que ton pied d'ivoire, an grand hasard écrase...

Paris 1912

JUILLET

Les vignobles mûris ont des rougeurs de fièvre.
Les nids ont tons rouverts leurs prunelles de chants
Et ce matin fait fondre cantique éblouissant,
Tout le miel de ta bouche au soleil de mes lèvres.

Paris

Que voudrais-tu pour un regard ?
 Que faut-il te douer, enfant, pour un regard,
 Sur moi, pauvre passant, jeté comme au hasard ?

Dis-moi ce que tu veux. Ah! veux-tu qu'aux étoiles
 Je prenne leurs reflets et t'en fasse des voiles ?

Voudrais-tu posséder cette moire des eaux,
 Et ce scintillement ondoyant pour bandeaux ?

Voudrais-tu pour m'aimer et le muse et la myrrhe,
 Parfums que chérissait la reine de Palmyre ?

Ou bien de ces bouquets de tulipes, de lys
 Qui paraient des deux seins de la Sémiramis ?

Veux-te que traversant les déserts d'Arabie,
 Je t'apporte et de l'ambre, et de la perle ravie ?

Pourrais-je couronner ton beau front, de lapis,
 Pour tes pieds si mignons de gros et mous tapis ?

Dis-moi ce que tu veux! Car ni moires de Chine,
 No saphirs, ni rubis, ni jamais paroles fines,

Ne valent ton regard céleste et délicieux,
 O ange de ce monde, ô vraie houri des cieux!..

Paris, 15 Fev. 1912



Ո Ղ Բ Ե Ր Գ

Հ. ԵՍԱՅԻ Վ. ՏԱՅԵՑԻԻ ՎՐԱՅ

Չմեռող չհասած՝ աշնանային ղեռ կենքերի մէջ՝
 Ինչո՞ւ այսպէս թառամեցար շուտով, ողբացեալը իմ յա-
 ւէտ, ո՛վ իմ չ. Եսայիաս:



Հ. ԵՍԱՅԻ Վ. ՏԱՅԵՑԻ

Երնդավայր Պարտիզա-
 կիդ մէջ երկու մամերէդ մին
 հարիւր գարուն էր տեսեր,
 միւսն ալ իննսունուհինգ,
 զանոնք բուսցնող հողէն էր
 զանգուած հոգիիդ տաղաւա-
 ըը կազմող մարմինդ ալ
 յաղթանդամ, ինչո՞ւ այսպէս
 բանդուեցաւ շուտով:

Մխիթարեան դարաս-
 տանին Լիբանանեան մայրն
 էիր դու հաստարեստ, ո՞ր հողմ սաստկաշունչ ձգեց
 զբեզ յանկարծ գետինը այսպէս դիտապաստու
 Թիկունքդ լայն (*) անառիկ պարիսպն էր Մխի-

(*) Ահա թէ ի՞նչ կը գրէ բանասէրծ Ա. Ահա-
 րոնեան Հ. Եսայիի մասին, այցելութեան մը առթիւ
 Ս. Ղազար վանքին. «Հ. Եսայի Տայեցին, լայնաթի-
 կունք, յաղթանդամ մի թղամարդ, ինչ որ լեռնական

թարեան կարժիր Վանքին, յանդուզն ո՞ր թշնամին կոր-
ձանեց զքեզ այսպէս արագ:

Արիւնդ բոսորագեղ եփ եփ կեռար զեռ երակնե-
րուդ մէջ բոլոր, ո՛ր ցուրտ սաստիկ սառեցուց և անշըն-
շացուց զքեզ այսպէս շուտով:

Մտքիդ բուրաստանէն ծաղիկներ հաւարած երփնե-
րանց՝ կ'ուզէիր ծաղկեփունջ(*) մը ընծայել ազգիդ ի
ժօտոյ, թանկագին այդ նուէրդ դեռ չընծայած՝ ինչո՞ւ
յանկարծ հեռացար մեր բովէն:

Հայրն էիր(**) դու թշուառ օրբերուն, նայուածքդ

բան է բերել իր հետ Տայոց լեռներից. նա անխնց
գրադարանագրեան է. սիրալիր պատաստակամութիւնը,
որով նա աւխառում է զոնացնել գրադարանում ըզ-
բաղուող հիւրերին, վկայում է նրա բուն արեւելեան,
բուն հայկական, աւելին կ'ասեմ գեղջկական հիւրա-
սիրութիւնը: (Մխիթարեան Միաբանութիւն, 200ամեայ Յօրեղանիքն առ իբրով, Տպ. Թ. Ճ. Վ. Վ. 1901):

(*) Ակնարկուածն «Գէորգ Ապրուլլանի» վրայ
ուսումնասիրութիւն մըն է ընդարձակ, զոր նոխացու-
ցեր է հանգուցեալն պատմական տեղեկութիւններով եւ
անհիպ վաւերաբոլորներով, եւ բովանդակը պատաս-
սած մինչ մտադիր էր զայն սպագրութեան թալու՝ յան-
կարծ վրայ հասաւ մահն:

(**) Միաբանութիւնը զինքը կարգեր էր իբրեւ
Հոգեւոր Հայր հայ օրբերուն Մխիթարեան Որբա-
նոցին Միլանու եւ Մեծաւոր Մխիթարեան Հայրերու,
կրկին պատօճներ, զոր վարեց անձնուիրաբար մինչեւ
մահը:

անուշ՝ ամոքիչ անոնց ցաւերուն, խօսքերդ սիրալիր.
սպեկանի անոնց վերբոս սրտերուն, հայելիին մէջ սըր-
տիդ գորովալից կը տեսնէին անոնք պատկերները ի-
րենց հայրերուն հարագատ, ինչո՞ւ յանկարծ բաժնուե-
ցար այսպէս անոնցմէ շտապով և որբացուցիր զանոնք
կրկին:

Մահունէդ դեռ ասրի մը առաջ՝ հագարաւոր ժո-
ղովուրդ կ'ողջունէր զքեզ **կեցցէ**ներով, երբ մասնակ-
ցելով թափօրի մը փառայեղ՝ շուրջառաւոր, սաղաւար-
աւ զուխդ, զաւագանը ձեռքդ վեժմափառ կ'անցունէիր
արբունական պողոտայէն Միլանու քաղաածքովդ կորո-
վալից: Ո՞վ երբէք կ'անցնէր մտքէն այդ պահուն, թէ
տարի մը վերջ նոյն պողոտայէն պիտի անցնէր մար-
վինդ անշնչացեալ՝ նո՛յն ժողովուրդին արցունքներով
ողողուած:

Ըո՛ղ՝ ինձի աղէ, Հ. Եսայիաս, ըսէ՛ ինչո՞ւ յան-
կարծ թառածեցար այսպէս շուտով, ինչո՞ւ այսպէս
բաժնուեցար մեզմէ շտապով:

Թռչուն թեւերուն վրայ թրթռալով հովիկին՝ կու-
զայ հնա վերէն պատասխանը հարցուններուս, նոյն
ինքն հոգին է. Հ. Եսայիայ՝ որ կը բարբառի:

— Ամբակառոյց էր այո՛ հողազանգուած տաղաւարն
հողոյս, բայց վերբոս էր սիրտս վերբոսու Դառնակսկիծ
ցաւերու սլաքներն սայրատուր խոցոտեր էին զայն կա-
րեվէր վերջին գարուններուս մէջ կեանքիս...: Թէ՛ ու-
նիս սիրտ ամուր, լսէ՛ աղէ մի քանիսը ցաւերուս
Դալարազարդ բարձունքին վրայ ծննդավայրիս

բոյն մը ունէինք ընտանեկան, բոյն մը սիրուն, շէն-
ցած սիրելիներովս լերդահատոր: Փոթորիկ մը սաստ-
կաշունչ բանդեց յանկարծ մեր այդ բունիկը սիրուն,
սիրելիներս բոլոր եղած ցիրուցան, խաղալիկ բախտին:
Ես ինքնին մնացի անտուն, ունեցածներս բոլոր
մասնուեցան կորուստի: Թանգակին հաւաքածոներս(*)
գրական, արդիւնք երկարամեայ վաստակոցս, աւա՛ղ
բոլորն ալ անյայտացան, պատճառելով դառն վիշտ
սրտիս, որ կը գուրգուրար անոնց վրայ:

Չգիտեմ ինչպէս՝ շնորհիւ նախասնամուծեան՝ զը-
տայ վերջապէս բունիկս Մխիթարեան, ուր ամփոփուած՝
մինչ կ'ողբայի զիշեր ցերեկ կորուստը սիրելիներուս,
հեռաւոր հովերէն յանկարծ մօտիկս ժամանումը տեսայ
ա՞նա պաշտելի մօրս ձերունազարդ: Կառքի մը մէջ էր
դրուած, կիսամե՛ռ գրեթէ, ո՛չ մէկ շարժում վրան, ո՛չ
մէկ խօսք բերանը, սոյն վիճակին մէջ անզգայ հագիւ-
երկու օր տեւեց կեանքն- համբոյր մը դրոշմեցի պաղած
նակտէն, չգիտեմ զգա՛ց թէ ոչ, փակեց աչքերը նոյն-
հետայն անբարբառ, և իմ աչերէս մարգարիտներ կաթ-
կըթեցան մարմնոյն վրայ անոր անշունչ...:

(*) Հանգուցեալին ինքնագիր հեղինակուելիննե-
րըն էին առնմ, որոնցմէ յիշեմ միայն հետեւեալնե-
րը. 1. Համաւօս տեղագրութիւն Պարսիզակի:
Սովորոյթի եւ անգիր բանահիւտութիւն ժողո-
վըրդական: 2. Բառգիրք հայկ. գաւառաբա-
բառոյ: 3. Ազգային լրագիրքս այբուբենա-
կան կարգի: 4. Առածք եւ Առակք ազգային:

Չէր սպիացած դեռ վերքը սրտիս, յանկարծ գուժ-
կան հասաւ մօտիկս, գուժկան՝ որ կը բօթէր իրերայա-
շորդ քստմնեցուցիչ մահերը երկու թռնիկներուս հրեշ-
տակաբար: Մին ծովամոյն էր եղած եւ աղի ալիքներու
անդունդին մէջ աւանդած հոգին: Միւսին քնքուշիկ
մարմինն էր ճմլուեր՝ անիններուն ներքև ինքնաշարժ
կառքին ու անշնչացեր մանրերկրորդին մէջ...:

Ի՞նչ ըսեմ ապա բուրիկիս անուշիկ, բուրիկիս նա-
զելի, որ այն ինչ բերելու վրայ էր պտուղը իր սիրոյն
միասին անոր հետ թառամեցաւ ու գալարումներուն մէջ
աղէխարշ աւանդեց ամբիժ հոգին...:

Ու միթէ քարե՞ էր շինուած սիրտս, որ դիմանար
այսքան հարուածներուն ուժգին...: Ատոնք ա՞նա, ա-
տոնք յօշ յօշ պատառեցին սիրտս ու զաղրեցաւ անոր
հալոցին մէջ եռացող արիւնս բոսորագեղ...:

Բայց ինչո՞ւ լալ, եղբայր, անշատուս ձեզմէ, ին-
չո՞ւ ողբալ մահս, որով անմահացայ և կ'ապրիմ ան-
վիշտ անպտտում ուրախութեան մէջ երկնային դրախ-
տին, ուր սէր է համակ և խաղաղութիւն անդորրաւէտ:

— Հանգչէ՛ ուրեմն, եղբայր, խաղաղութեան մէջ
անվրդով, բայց մի՛ մոռնար և զիս, որ քեզի բարձրա-
ցուցած եմ միշտ աչքերս արտառալից...:

«Այո՛, եղբայր, ես քո փոխանակ եղէց ի Տէր՝
հանգո գաղիսդ իմ ի ֆրիստոս»:

ԽՈՒՐԻՆ ՆԱԿԱՆՆ

ՅԱԿԿԱՄՇԱԿՈՒԹԻՒՆ

ՅԱԿԻՆԹԸ

Ձիւն ձերմակէն մինչեւ կարմիրին, դեղինին ու կապոյտին ամէնէն մուլթ աստիճաններուն հասնող գոյներու իր անհուն պէտպիսութիւնով, անուշ հոտով, վայելչագեղ կեցուածքով, եւ մանաւանդ իր զանազան ու իրարմէ դիւրին մշակութեան ձեւերով, յակինթը սոխազգի ծաղիկներուն իրաւամբ ամէնէն ժողովրդականն է, այնպէս որ ամէն տարի այս գեղեցիկ ծաղկին սոխերը միլիոններով կը մշակուին Հոլանտայի մէջ, եւ կը ղրկուին աշխարհի ամէն կողմերը:

Իրաւ է թէ առհասարակ ամէն ծաղկի բազմաթերթերը նախամեծար կը համարուին, բայց նոյնը չէ յակինթին համար: Անոր փորձ ու ճշմարիտ սիրահարները՝ միայն եւ միայն միապսակ տեսակները կը մշակեն. որովհետեւ այս վերջնոյն ցօղունը՝ աւելի առատ, խոշոր ու վառ գոյներով զանգակիկներու ձօն ու հարուստ փունջ մը կը կազմէ:

Տեսակներ կան, որոց սոխերը շա՛տ խոշոր, ուրիշներ՝ նուազ մեծ, նոյն իսկ համեմատաբար փոքր ու երբեմն տձեւ են, բայց իր տեսակին պատկան մեծութեան ու ձեւի այս տարբերութիւնները, անոնց տակիք ծաղկին գեղեցկութեան

վրայ չեն ազդեր բնաւ: Եթէ կայ նկատողութեան առնելիք բան մը, այն ալ սոխին ամբողջութեան կարծրութիւնն է՝ ինչպէս նաեւ յատակին՝ ողորկ, լայն, կարծր եւ ցայտուն դժով մը շրջանակուած ըլլալը:

ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ

ԱծԱՆՔԻՈՒ ՄԷՉ.— Ինչպէս գրեթէ ամէն սովորակ ծաղիկ, յակինթն ալ դժուարահաս է հողի մասին, եւ սակայն իր առաւելագոյն գեղեցկութիւնը կը սարգեւէ, եթէ մշակուի նախապէս աղէկ հերկուած, աղբուած աւազային հողի մը մէջ:

Այս պայմաններով պատրաստուած ածուխ մէջ Սեպտեմբեր մինչեւ Հոկտ. վերջ (ամենէն ուշ մինչեւ Նոյեմբերի կէսը. որովհետեւ տնկարկութիւնը որքան ուշ մտայ, արդիւնքը ա՛յնքան դէշ կ'ըլլայ, եւ Դեկտեմբերի վերջերը մնացածները արդէն իսկ կը վիթխն): 10 սանթիմէթը խորութեամբ եւ 15—20 սանթ. համաչափ հեռաւորութեամբ տնկեցէք ձեր սոխերը: Հաւաստեցուցէք հողը, զոր լաւ կ'ըլլայ ծածկել անուշ ջուրի աւաղի թիթեւ խաւով մը. անձրեւներու եղանակն է արդէն, որով առաջին առողւսմէ մը յետոյ, այլեւս ջրելու պէտք չկայ:

Գարնան առաջին շրջանին ծաղիկները կը սկսին ցուցադրել իրենց բոլոր գեղեցկութիւնը:

Չեր ածուները շատ աւելի հմայիչ կ'ըլլան եթէ
յակինթներու սոխերուն հետ մէկտեղ տնկէք նաեւ
կակաջի եւ նարկիսի սոխեր. եթէ մանաւանդ նա-
խապէս նկատողութեան առնուք նաեւ գոյներու
ներդաշնակութիւնը:

Այս իսկապէս սիրուն ծաղիկներուն կեանքը
կրնաք երկարել, եթէ պատահական անձրեւներու
եւ կանխահաս տաք արեւներու զէմ, ծածկոյթով
մը պահպանէք զանոնք:

Երբ ծաղիկները թառամին, անմիջապէս կըտ-
րեցէք ցօղունը— ցօղունը միայն— հողէն 5 սան-
թիմ. վեր, որպէս զի սոխը որ արդէն իսկ յոգնած
է, իրեն մնացած ոյժը հունտերուն սնուցման յատ-
կացնելով՝ բոլորովին չ'ոպաւի, ընդհակառակը ան
այդ պահուն պէտքն ունի հանգստանալու, կազ-
դուրուելու, յառաջիկայ եղանակին պատրաստուե-
լու համար:

Երբ ցօղունը կտրէք, ուռուցումները աստիճա-
նաբար դադարեցուցէք եւ երբ տերեւներն դեղնին
(Յունիս Յուլիս) հանեցէք բոյսը հողէն. շուք տեղ
մը դրէք, որպէս զի սոխերը չորնան, եւ 10—15 օր
յետոյ, մաքրեցէք, կտրեցէք չորցած տերեւներն ու
արմատները, եւ ձեր սոխերը պտհեցէք օդաւէտ
տեղ մը, մինչեւ յառաջիկայ Սեպտեմբեր, Հոկտեմ-
բեր, կրկին յանձնուելու համար հողին:

Ըսենք սակայն թէ՛ այն սոխերը, երկրորդ տա-

րին, առաջնոյն չափ ճոխ ու գեղեցիկ ծաղիկներ
չեն կրնար տալ, ո՛րքան ալ խնամք տարուի թա-
լարներու մէջ, ոչ նուազ գեղեցիկ արդիւնք կու-
տայ. եւ իսկապէս թանկագին վայելք մը կը պար-
գեւէ մեզ, մեր սենեակներուն մէջ, այն պահուն
երբ ձիւնը պատած է ամէն կողմ եւ բուսական
կեանքը՝ պարտէզներու մէջ գրեթէ դադրած:

Նուազագոյն, 12 եւ առաւելագոյն 15 սանթիմ.
տրամագիծ ունեցող թաղարներու խորքը՝ կտրած
թաղարի քանի մը կտոր դրէք, եւ լեցուցէք զա-
նոնք ածուներուն համար ըսուած ձեւով պատրաս-
տուած հողով: Տնկեցէք սոխը ո՛չ-շատ խորունկ
առատօրէն ջրեցէք եւ քանի մը ժամ յետոյ թա-
ղարները ամբողջութեամբ թաղեցէք իրենց բնա-
կան դիրքով պատի մը եզերքը, եւ 15-20 սանթիմ-
թեթեւ հողով մը ծածկեցէք զանոնք: 6էն 8 շա-
բաթ յետոյ, արմատները կատարելապէս զարգա-
ցած են, եւ սոխը՝ արդէն իսկ 2-3 սանթիմ. բարձ-
րութեամբ կոնաձեւ ծիլ մը արձակած է: Այն ա-
տեն կը հանէք հողէն ձեր թաղարները, կը մաքրէք
զանոնք ու կը դնէք թիթեւօրէն լուսաւոր ու հա-
զիւ դաւջ տեղ մը: Յետոյ, այս մանկիկ բոյսերը
աստիճանաբար վարժեցնելով լոյսի ու ջերմութեան,
ձեր ուզած թուով թաղարներ կը բերէք մինչեւ
ձեր տաքուկ սենեակը եւ ամէնէն լուսաւոր տեղը
կը յատկացնէք անոնց, բայց միշտ հետո՛ւ վառարա-

Ան: Բնականաբար երբ պէտքն զգացուի, կը ջրէք ձեր Թաղարները, սենեակիմ մէջ զգնուած ջուրով: Գէն Յ շաբաթ յետոյ, կը սկսին ծաղիկել, եւ այդպէս հոնաք Թաղարներուն հողը ծածկել թրջած կանանչ մամուռով. բան մը որ երկու առաւելութիւն միանգամայն ունի. գեղեցիկ երկւոյթ մը տալ Թաղարին եւ հողը միշտ խոնաւ պահել:

Թաղարները ո՛րքան ուշ ենթարկուին ջերմութեան, այսինքն որքան ուշ սենեակ բերուին, այնքան ուշ կը ծաղիկին, որով դանոնք մաս առ մաս տաքցնելով, կրնաք երկար ատեն ծաղիկ ունենալ: Շիբեռու մէջ մշակութիւնը, որ միմիայն տա՛ն մէջ տեղի կ'ունենայ, իսկապէս շա՛տ հետաքրքրական է, որովհետեւ ան թոյլ կուտայ մեզ հետեւի բոյսին արմատներուն աստիճանական զարգացումին:

Հոկտեմբերը յարմարագոյն ժամանակն է, եւ ինչպէս Թաղարներու մէջ, նոյնպէս նաեւ շէշերու վրայ մշակման համար միաթերթ յակինթները նախածար կը համարուին: Ընտրուած սոխերը բացարձակապէս աւուզջ, բարիձեւ, եւ մեր շէշերուն բացուածքին համեմատական մեծութեամբ մը պէտք է ըլլան:

Շիշը անձրեւի ջրով լեցնելէ յետոյ, դրէք սոխը վրան այնպէս որ սոխին յատակը եւ ջուրին մակերեսը զերար շօշափեն, ո՛չ աւելի: Դրէք շէշը մութ ու զով տեղ մը, որովհետեւ, բնական օրէնքով,

մթութեան մէջ է որ կը զարգանան արմատները եւ կը հասնին մինչեւ շէշին յատակը, ինչ որ տեղի կ'ունենայ 3-4 շաբթուան մէջ, եւ այդ ժամանակամիջոցին՝ ծին ալ կը սկսի երեւել: Ասիսը երկու անգամ պէտք է նորոգել ջուրը: Քանի արմատները զարգանան, ջուրը թեթեւօրէն կը պահուի. այդ պահասը պէտք է լեցնել, որովհետեւ ջուրին մակերեսին եւ սոխին յատակին միջեւ յառաջ եկած պաշտպութիւնը՝ արմատները իրենց մեկնակէտէն իսկ չորցնելու վտանգին կ'ենթարկէ:

Երբեմն կը պատահի որ թեթեւ աղտ մը կուգայ պատել արմատները, այդ պարագային պէտք է զանոնք մաքուր ջուրով մը լուալ, ու նորոգել շէշին ջուրը, ուր օգտակար է դնել քիչ մը աղ կամ փայտածուխի փոշի, որ, աստիճան մը, կ'ապահովէ ջուրին մաքրութիւնը:

Այսպէս ուրեմն, երբ արմատները իջած են շէշին խորքը, մութէն լոյսը կը հանէք զայն, ու, ինչպէս Թաղարները կը դնէք ձեր սենեակին մէջ շա՛տ լուսաւոր տեղ մը, բայց միշտ հեռու վառարանէն: Կամաց կամաց տերեւները կը զարգանան, Կոկոնը կ'երեւի եւ վերջապէս ծաղիկը կը ցուցադրէ իր բոլոր բոյրն ու փայլը:

Որովհետեւ ջուրը, հեղուկ մարմին, չի կրնար պինդ դրկել արմատները, բոյսը՝ երբ մանաւանդ ծանրաբեռնուած է հարուստ փունջով մը, ծռելու, իյնալու վտանգին կ'ենթարկուի: Այս անպատեհու-

Թիւնը դարմանելու համար, ոմանք բարեձեւ ու հաստատուն մետաղ Թելով մը կը կապեն ցողունը, ըստ կարելոյն նուազ, տեսանելի կերպով. իսկ ոմանք փոխանակ ջուրի, աւազ, մամուռ կամ երկուքին խառնուրդը կը դնեն շիշին մէջ, միշտ, բնականաբար, Թաց պահելով զայն. այս պարագային, Թէեւ արմատները կը հաստատուին եւ բոյսին ծուկը վտանգը կը վերնայ, եւ սակայն հետաքրքիր ամաթէօնը կը գրկուի արմատներուն աստիճանական զարգացումը տեսնելու հաճոյքէն:

Որովհետեւ ջուրը, աւազը կամ մամուռը չեն պարունակեր իրենց մէջ հողին ունեցած մնուցիչ տարրերը, շիշերուն վրայ մշակուած սոխերը շատ կը առաւպին, եւ իրենց ծաղիկները—նոյ՛նքան գեղեցիկ ս'րքան հողի մէջ մշակուածները—տալէ յետոյ բոլորովին կը պարպուին, կ'ոչնչանան, եւ սակայն ծաղիկն պարգեւած վայելքը՝ լիուր կը փոխարինէ սոխին կորուստը:

Աշնան վերջին օրերէն սկսեալ, ձմրան ամբողջ տեւողութեան, երբ բնութիւնը այլեւս ծաղիկմշակին կը զանայ իր բարեացակամ աջակցութիւնը, մինչ պարտէզներու մէջ ծաղիկները ա՛լ բոլորովին անրեւուութացած են, որքա՛ն հաճելի է քիչ ծախքով եւ մանաւանդ անձամբ մշակել գոյնով ու բոյսով գեղեցիկ այս ծաղիկները, որոնք, ձմրան տխուր օրերուն, մեզ Թէ՛ հաճելի ժամանց մը եւ Թէ՛ գուարթութիւն մը կը պարգեւեն:

ԶԱՐԵՂ Ս. ՔԼՍԵԱՆ

“ Կ Ս Ր Ա Պ Ե Տ , , ”

Հրաշքներու դար.— Ներկայ դարուս մէջ՝ հրաշքները այնքան արագ կը յաջորդեն իրարու որ այլեւս կորսնցուցած կը թուինք անոնց վրայ հիանալու մեր կարողութիւնը: Հեռաձայն, անթել հեռագիր, օդանաւ, ռադիոյ, հեռագատկեր (telephote), արդէն իսկ գիտութեան նուաճած հրաշքներն են այժմ, զորս ամենամեծ դիւրութեամբ կ'օգտագործենք մեր ամէնօրեայ կեանքին մէջ, յաճախ առանց անդրադառնալու որ մեզի համար դիւրակեաց պայմաններ ապահովող գիտական այս նուաճումները՝ դեռ սերունդ մը առաջ անիրագործելի հրաշքներ կը նկատուէին:

Այժմ գիտութեան մէկ նոր նուաճումի փորձերն առաջ կը տարուին յաջողութեամբ, **հեռաեստելիւն** (television) է՝ այդ գիտքը, որուն շնորհիւ հնարաւոր կը դառնայ հեռաձայնի կամ ռադիոյի միջոցաւ խօսող կամ երգող մէկու մը թէ՛ ձայնը սել եւ թէ՛ միաժամանակ տեսնել անոր պատկերը իր խօսած կամ երգած դիրքին մէջ:

Դեռ վերջերս ալ նոր ծանուցուեցաւ որ ջանքեր

կ'ըլլան պատկերախաղերու. (moving picture) գրա-
ւոր մասը ծայնի միջոցաւ հաղորդել պատկերադէտ-
ներուն, որոնք այլեւս զերծ պիտի մնան զայն կար-
գալու եւ աչքերնին յոգնեցնելու ծանծրութենէն եւ
հարկէն:

Ինչ պիտի լինի յաջորդ հրաշքը. **Չրի ոյժ** (free
energy) արտադրող մեքենային զիւտը արդեօք, թէեւ
սա գրեթէ տասը տարուան կեանք եւ բաշքշուրի
երկար պատմութիւն մը ունի իր ետին:

Գերահրաշ գիւտ մը պէտք է լինի այդ նորագիւտ
մեքենան. յիրաւի հայազն Պրն. Կարապետ Կիրակոս-
եան, որ այժմ Բոստոն կը բնակի, ամենայն անկեղ-
ծութեամբ կը յայտարարէ թէ հնարած է «Չրի Ոյժ»
արտադրող մեքենայ մը, որ իրականութեան պիտի
վերածէ «Հազար ու Մէկ Գիշերներ»ու երեւակայա-
կան պատմումները, եւ հիմնովին պիտի յեղափո-
խէ մարդկային աշխատանքին կերպերը, ու այժմեան
բաղաբակրթութիւնը պիտի բարձրացնէ աւելի բարձ-
րագոյն աստիճանի մը:

Ինչոքը.— Այդ խորհրդաւոր գիւտը կը բաղկա-
նայ շարժիչ մեքենայէ (motor) մը, որ առանց վա-
ռելանիւթի կը շարժի տեսակ մը թագուն եւ ցայժմ
անծանօթ ոյժի մը միջոցաւ, եւ առանց ծախքի
կ'արտադրէ անսահման ոյժ:

Այս հիանալի մեքենան զոր «Կարապետ» կը
գոչէ հնարիչը, ելեկտրական գործիք մը չէ, այլ կը
գործէ ոյժի մը միջոցաւ, որ արդէն գոյութիւն ունի

բնութեան մէջ եւ պատրաստ է օգտագործուելու,
ճիշդ նման ելեկտրականութեան, որ արդէն գոյու-
թիւն ունէր, միայն զայն գտնելու եւ պիտարկելու
(utilize) կերպն էր որ գտնուեցաւ:

Այդ ոյժին բնութեան մէջն է՝ զիտին գաղտնիքը,
եւ «Կարապետ»ն է որ աշխատանքի կը լծէ այդ
ոյժը:

Առանց սեւէ տեսակ վառելանիւթ գործածելու
եւ առանց ուրիշ սեւէ ծախքի, այդ մեքենան կ'ար-
տադրէ անսահման քանակութեամբ տեսակ մը ելեկ-
տրականութիւն: Այդ զարմանալի մեքենային շնոր-
հիւ՝ այլեւս վերջ պիտի գտնէ գործածութիւնը սակն
տեսակ վառելանիւթերու (փայտ, ածուխ, քարա-
ծուխ, իւղ, քարիւղ, գազիւղ, եւ այլն.):

Գործելով առանց ծախքի եւ առանց բռնկումի
փտանգին՝ զիւրաւ կարելի է զետեղել զայն տան
Ներքնայարկը, — եթէ կ'արժէ ներքնայարկ ունենալ,
երբ ջեռոց, հնոց, թոնիր, վառարան, վառելափայտ,
եւ այլն. ունենալու հարկ չի մնար, — անոր հոյթայ-
թելով անհրաժեշտ ոյժը (Energy)՝ առտնին պէտքե-
րու համար, (լոյս, տաքութիւն, եփելու համար կրակ,
սառցարանին համար սառոյց, եւ այլն.): Հնոցները,
թոնիրը, կերակուր եփող վառարանները, հին դրու-
թեամբ ջեռոցները, որոնց բոլորին համար ալ վա-
ռելանիւթ կը գործածուի, եւ ջերմութիւն փոխադ-
րող խողովակները յաւիտեանս պիտի անհետանան
տուներէն:

Այս պիտանի մեքենան շատ պարզ է, դիրատար, պզտիկ եւ աննշան տեղ մը գրաւող:

Բնութեան մէջ անսահման քանակութեամբ կը գտնուի այդ ոյժը, ինչիբըրը զայն խտացնելն է ճիշդ այնպէս, ինչպէս կը խտացնեն ջուրի կամ քամիի հոսանքին ոյժը, անով մեքենան շարժման մէջ դնելու համար:

«Կարապետ»ը կրնայ արտադրել հազարներով ճիւղ ոյժ, գոթ կարելի է փոխադրել տեղէ տեղ, ինչպէս որ ելեկտրականութիւնը կը փոխադրուի ելեկտրական թելերու միջոցաւ: Որոշ տարածութեամբ վայրի մէջ, — օրինակ Բոստոնի Համայնքը (common), 48 լծկար (acre) տարածութիւն մը, — կրնայ արտադրուիլ այնքան քանակութեամբ ոյժ, որ ատակ կ'ըլլայ շարժման մէջ դնելու երկրիս բոլոր մեքենաները: «Կարապետ»ի միջոցաւ ձրիաբար հայթայթուած անսահման ոյժով՝ Միացեալ-Նահանգները կրնայ կերակրել եւ հագուեցնել երկրագնդիս ամբողջ բնակչութիւնը:

Առանց մեծ ծախքի շարժիչ զօրութիւն ձեռք բերելով՝ ամէն անհատ ի վիճակի պիտի ըլլայ տիրանալու ինքնաշարժերու. բոլոր տեսակ փոխադրակառքերու (automobile, autobus, truck) ծախքը նուազելով՝ մարդիկ փոխանակ խճողուած ապրելու մեծ քաղաքներու խղղուկ եւ սպականած մթնոլորտի մէջ, իրենց բնակավայրերը պիտի հաստատեն քաղաքներու շրջակայքը՝ օգաւէտ եւ ընդարձակ վայրերու մէջ:

«Կարապետ»ը ձրի ոյժ, լոյս եւ ջերմութիւն պիտի հայթայթէ բոլոր ագարակներուն եւ գործարաններուն, անոր շնորհիւ վերջ պիտի գտնեն մարդկային եւ կենդանական ոյժով կատարուած երկրագործական աշխատանքները. երկրագործները իբր վառելիք պիտի գործածեն բորակատը (nitrate), որ պիտի ստացուի օդէն ձրի ելեկտրականութեան հետ միասին:

Ձրի եւ անսահման ոյժը պիտի վերակենդանացնէ ու քաջալերէ առտնին ճարտարաբուեստը, եւ պիտի մղէ կիները լծուելու այսօրինակ օգտակար աշխատանքներու, որոնք մեր մարմիկներու հասելի զբաղմունքը դարձած կին: Գիտական կատարելութեամբ օժտուած գործանդամներ (loom—թեզկետի—հոր) եւ այլ գործիքներ պիտի դիւրացնեն եւ ժողովրդականացնեն այդ հնամենի ճարտարաբուեստը, որ հաւանաբար պիտի չքաջալերուի քաղաքայնակներէն, սակայն մեծ ընդունելութիւն պիտի գտնէ զեղջկական շիջանակներուն մէջ:

«Կարապետ» մը կարող պիտի ըլլայ բաշել ամենածանր կառաշարքը, զոր երկու զօրաւոր վայրաշարժիչ հաղիւ կարողանան քաշել: Առանց ծուխի եւ մուխի՝ պիտի կարենայ շարժման մէջ դնել ցայժմ չտեսնուած ամենամեծ շոգենաւը՝ աւելի մեծ արագութեամբ մը, որ հազիւ կարելի ըլլայ արտադրուիլ իւրի մոմենակատարելագործեալ մեքենաներու միջոցաւ. այդ նաւերը, որոնք անսուզելի յատկութեամբ

ալ պիտի օժտուին, կարող պիտի լինին կտրել ուկիանոսը 30 ժամէն: Այժմեան շոգենաւերը անգործածելի պիտի դառնան այլեւս. ապագայ սերունդները թանգարաններու մէջ միայն պիտի գտնեն եւ հետաքրքրութեամբ դիտեն զանոնք:

Օդային երթեւեկութեան ապագան ալ կախում ունի «կարապետ»էն. օդանաւը օժտուած «կարապետ»ով մը, որպէս զի շարժիչ ոյժ հայթայթէ. զերծ պիտի մնայ այրուելու փտանգէն: Օդանաւորը պարտաւորուած պիտի չլլայ վար իջնելու՝ զազի եւ ջուրի համար, եւ այդպիսով ան կարող պիտի ըլլայ վեր՝ օդին մէջ մնալ իր ուզածին չափ: Անգամ մը որ այս առաւելութիւնները ձեռք բերուին, օդային նաւագնացութեան եւ վաճառականութեան հարցը այլեւս լուծուած պիտի ըլլայ:

Մտաւոր ապագային օդանաւը պիտի կրնայ սաւառնիլ օդին մէջ՝ մերեւային հայթայթած ելիկտրականութեամբ, որ պիտի չէզոքացնէ ձգողութեան ոյժը (Eprece of Cravity): Այս տեսակ օդանաւ մը կարելի է տարցնել ըստ բաւականին՝ դիմագրաւելու համար բեւեռային արշաւանքներուն յարուցած դժուարութիւններուն: «Կարապետ» մը կրնայ օժտել զայն 10.000 ձիու ուժով եւ աւելիով նոյն իսկ. այնպէս որ օդանաւորը ի վիճակի պիտի ըլլայ երկրագնդիս շրջանն ընելու քանի մը անգամ առանց վար իջնելու ստիպուած ըլլալու, ոյժին սպառած ըլլալուն պատճառաւ:

Ցնորք պիտի չըլլայ երեւակայել թէ ձգողութեան չէզոքացումովը՝ տուները պիտի կրնան թռչիլ օդին մէջ: Այդ թռչող տուները, որոնք օժտուած պիտի ըլլան վիթխարի շրջագէտերով (gyroscope) ալ, կրնան հանգստաւէտ ըլլալ՝ ցամաքին վրայ կառուցուած բնակարաններուն չափ, եւ անոնց նման շուայլօրէն կահաւորուած: Ցաջորդ սերունդներ ամէն աշուն պիտի տեսնեն անոնց խումբ խումբ թռչիլը՝ դէպի Հարաւ Ֆրրիդա, կամ դէպի Արեւմուտք՝ Կալիֆօրնիա, ձմեռը այդ տեղերը անցընելու համար:

Ո՛րքան աւելի հասնիլի եւ դիւրին է փոխադրել ամբողջ տունը իր պարունակութեամբ, քան թէ իր կարասիքը փոխադրել ուրիշի մը տունը, եւ անորինն ալ նոյն տունը: Այդ տեսակ թռչող տուները փոխադրութեան յարմարցնելու համար՝ պէտք է շինուին անիւներու վրայ: Ընտանիք մը, որ Արեւելեան Նահանգները կը բնակի եւ կը փափարի ձմեռը Կալիֆօրնիա անցընել, միմիայն «մնար բարեւալ» պիտի ըսէ իր զրացիներուն, եւ տունով տեղով սաւառնի օդին մէջ դէպի Կալիֆօրնիա ուղեւորելով:

Իր գիւտի մասին այսքան մանրամասն տեղեկութիւններ տալէն վերջ, հայ հնարիչը վստահ շեշտով մը կը յարէ.— «Ես չեմ կարծեր թէ կը չափազանցեմ, երբ ըսեմ որ իմ գիւտս աւելի կարեւոր է եւ աւելի մեծ արժէք ունի մարդկութեան համար, քան թէ նոր աշխարհի մը գիւտը»:

Պատահե՞ց քէ իրականութիւն.— Այս ի՞նչ գերահրաշ գիւտ է որ կոչուած է այս աշխարհը դրախտի վերածելու եւ կեանքը երանաւէտ դարձնելու: Արդեօք այս գիւտը Բնագիտութեան սկզբունքներուն նոր դասաւորումով ձեռք բերուած եւ անոր օրէնքներով բացատրուող նորագոյն արգիւնքն է գիտութեան:

Վերոյիշեալ մանրամասն բացատրութիւնները զառանցանքի տպաւորութիւն կը թողուն ընթերցողին վրայ: Ժարդ վայրկեան մը կարծես կը տարուի կանխածելու նոյն իսկ հստակ հնարիչին մտային հաւասարակշռութեան վրայ, իբր ժարդ մը, որ իրարու հետ կը շփոթէ կարելին եւ անկարելին, երբազն ու իրականութիւնը, ցնորքն ու գիտական միտքը:

Ճիշդ է որ Արեւելքցիք վառ երեւակայութեամբ օժտուած ժողովուրդ մտնչցուած են, անոնց միտքը իրականէն ու կարելիէն վեր՝ անիրական եւ մտացածին մթնոլորտներու մէջ կը յաճի, արարական «Հազար ու մէկ Գիշեր»ները այդ վառ երեւակայութեան արդիւնքն են, Պողոտտի «Կախարդական Կապերտ»ին վրայ նստած ընդարձակ անապատներուն վրայէն կը թռչին հին դարերու երեւակայողները: Ալայէզդինի հսկայ պալատին թռիչքը Արարիոյ անձայտածիր անապատներուն վրայէն՝ կարծես նմանութեան եզր մը ունի մեր հայրենակցին նկարագրած տուններուն թռիչքին հետ՝ Նիւ-եօրքէն-Կալիֆօրնիա:

Բայց ինչո՞ւ ծաղրալից ակնարկով եւ արհամարհատ ժպիտով մը գոհանալ, եւ անգոսնել մարդը ու իր գործը:

Ժիւլ Վեռնի բեղուն միտքը չէ՞ր որ նկարագրած էր երեւակայական ճամբորդութիւն մը դէպի Լուսինը իր «Ճամբորդութիւն շուրջ Զուսնով» անուն զրբին մէջ, ուր այնքան հմայիչ եւ առիւնքնող ոճով մը կը նկարագրէ դէպի Լուսինը սուրացող գնդակին շրջագայութիւնը՝ համեմատած գրահաշուական մանրամասն ցուցմունքներով: Սակայն, ս'վ զարմանք, այսօր Վիեննացի երկու գիտնական բրօքէսէօրներ, Դր. Ֆրանց Հէօֆտ եւ Հերման Օքերթ, կը ծրագրեն հրթիռ մը արձակել դէպի Լուսինը՝ գիտական վերջնագոյն կատարելագործեալ մեքենաներով, եւ հարողակցութեան մէջ մտնել անոր հետ:

Նոյնպէս, երբ ֆրանսացի այս նոյն հեղինակը կը գրէր ուրիշ երեւակայական պատմութիւն մը, «Գասն Հազար Փարսախ Ծովերուն Տակ», պարզապէս «երբխաները զրնդեցնելու համար», երբեւիցէ կրնամք մտքէն իսկ անցընել որ Ամերիկացի Ֆուլթընի հնարած շոգեմակոյղը օր մը պիտի վերածուէր ենթծովեայի (Submarine), պատերազմական այդ ահռելի գործիքին: Այսօրուան ենթծովեան ուրիշ քան չէ, եթէ ոչ Ժիւլ Վեռնի երեւակայութեան ստեղծած այն մեքենան, որով ծովերուն տակէն ճամբորդել կ'երեւակայէր:

Պատմական.— Համաշխարհային Պատերազմին ամէնէն տագնապալի օրերուն էր որ մեծազորոջ յայտարարութիւններով յանկարծ հրապարակ կ'իջնէ Պ. Կարապետ Կիրակոսեան եւ Միացեալ-Նահանգաց կառավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ իր անձին ու գործին վրայ: 1917ի վերջերը: երբ Պատերազմը իր համայնակուլ ճիրաններուն մէջ էր առեր Հին ու Նոր Աշխարհները, Պ. Կիրակոսեան Պոսթոնէն կ'երթայ Վաշինկթոն, զրահուորուած բոսթոնցի ականաւոր Ամերիկացիներու զօրեւ յանձնարարականներով, որոնք տեսակ մը բարի վարուց վկայական էին իրեն՝ օժտուած մարուր նկարագրով: պատուաւոր եւ անշահախնդիր քաղաքացիի մը արժանիքներով:

Իր յայտարարութիւնը թէ իր զիւտը շուտով եւ ընդմիշտ վերջ պիտի տայ Պատերազմին, պարուրուած տեսակ մը խորհրդաւորութեան քօղով, մեծ հետաքրքրութիւն արթնցուց կառավարական շրջանակներուն մէջ: 1917ի Հոկտեմբերին, Ներկայացուցչական Տունը անցուց օրինագիծ մը, որով հաւանութիւն կը տրուէր Կիրակոսեանին շնորհելու արտաքոյ կարգի առանձնաշնորհումներ: Այս խնդիրը օրակարգի նիւթ դարձաւ Congressին ալ, որը նոյնպէս որոշեց արտակարգ օրէնքներով պաշտպանել եւ նպաստաւորել Պ. Կիրակոսեանը, եթէ րննիչ յանձնախմբի մը առջեւ կարենայ ապացուցանել իր քաժները իսկ Միացեալ-Նահանգաց Նախագահն ալ

ականաւոր գիտնականներու մէջէն ընտրեց հինգ հոգինոց յանձնախումբ մը, քննելու համար հնարաւորութիւնն ու կարելիութիւնն այդ նորահնար մեքենային, որ կոչուած է բախտորոշ դեր կաատրելու այդ տագնապալի շրջանին:

Պ. Կիրակոսեան նախապէս դժկամակած է իր գիւտը Բննիչ Յանձնախմբին քննութեան ենթարկելու, կասկածելով—ինչպէս միշտ—թէ իր զիւտը կրնայ դիւրաւ գողցուիլ: յետոյ ալ կը հաւանի Բննիչներուն ցոյց տալ որ ատեն տլ կը ջանայ խորհրդաւորութեան քօղով մը վարագուրել զայն, եւ նոյն իսկ կը զլանայ անհրաժեշտ բացաարութիւնները տալու կառավարութեան հեղինակութեամբ զօրացած այդ Բննիչ Յանձնախմբին: եւ հազիւ կը յօժարի իր մեքենային «մէկ մասը միայն» ցոյց տալու, միաժամանակ գործածելով իր արժաթահունչ լեզուէ: Արդարեւ Պ. Կիրակոսեան իր պերճախօսութեամբ այնպէս մը գերեր էր Ատենապետը, որ անվերապահօրէն կը յայտարարէր.— «Մեր բոլորիս վրայ ալ մեծ տպաւորութիւն էին ձգեր իր պարկեշտութիւնն ու անկեղծութիւնը. ան մեզի չըսաւ թէ ինչ ունէր եւ բացատրութիւն չտուաւ իր զիւտի մասին, բայց մենք բոլորս ալ զգածուած էինք իր պարկեշտութենէն ու խոհականութենէն»:

Գաղտնապահութիւնն ու կասկածամտութիւնը ամէնէն զօրաւոր զէնքերն են մեր հայրենակցին: Հակառակ որ Congressը իր երկու մարմիններուն

միաձայն եւ բացառիկ որոշումով հաւանութիւն յայտնած էր արտակարգ մենաշնորհներ տալու իրեն, պայմանաւ որ բննութեամբ հաստատուի «Կարապետ»ին գիտական եւ գործնական հանգամանքներ հայրենակիցը սակայն տարբեր կը մտածէր, ան կը ջանար, թերեւս հիմա ալ կը ջանայ այդ իրաւունքը կանուխէն ձեռք բերել, որուն կ'ընդդիմանան Շնորհագրոց Պաշտօնատունը (Patent Office) եւ երկրին ընկալեալ սովորութիւնը, հակասահմանադրական գտնելով զայն, որովհետեւ կը պնդեն որ «այս երկրին մէջ Շնորհագրոց Օրէնքը ձեռնհաս է լիովի պաշտպանելու ո եւ է պարկեշտ հնարիչի իրաւունքները, եւ միմիայն Պ. Կիրակոսեանի կասկածամտութիւնն է պատճառը, որ բաւարար չնկատեց այդ պաշտպանութիւն, եւ թելադրեց իրեն փնտռելու Congressի մասնաւոր պաշտպանութիւնը»:

Պ. Կիրակոսեան իր ընթացիկ կեանքին մէջ ալ ցոյց կու տայ այդ կասկածամտութիւնը: Շատ տարօրինակ թող չթուի որ ամենամտերիմ բարեկամներն իսկ չեն գիտեր թէ ինքը ուր կը բնակի Պօսթօնի մէջ, որովհետեւ միշտ կը փոխէ իր բնակարանն ու հասցէն: Յաճախ երկու տուն կը վարձէ, մէկը իրեն, իսկ միւսը իր մեքենային համար, եւ շարունակ կը փոխադրուի տեղէ տեղ:

Ինքը գոհն է այն պատրանքին թէ, կրնայ դիւրաւ գողցուիլ իր գիւտը: Կ'ըսուի թէ Պ. Կիրակոսեան կը խուսափի բարեկամութենէ քիչ շատ մտացի

անձերու հետ, իսկ անուս եւ թթամիտ բարեկամներու կ'արտօնուի մինչեւ իսկ այցելել իր սենեակը:

Պ. Կարապետ Կիրակոսեան Խարբերդի շրջականերէն է, մտաւարապէս 65 տարեկան, կինն ու գաւակները Թուրքիա թողով եկած է Ամերիկա 1891ին եւ իր առաջին բնակութիւնը հաստատած է Ուստըր, Ամերիկահայերու նախկին ոստանը, ուր պզտիկ իսանութի մը մէջ փորձեր ըրած է քսան տարի անընդհատ՝ «Նոր տեսակ մեքենայ մը» շինելու համար: Ան չափազանց ծանր աշխատանք է թափիր այդ արդիւնքը առաջ բերելու համար, բայց ինչպէս կ'ըսէ ինքը, «Տեսակ մը ներազդութիւն (intuition) կարողացուց զիս հասկնալու այդ սկզբունքը»:

«Կարապետ»ի գիտական արժէքը. — Բնականարար շատեր ի սկզբանէ թերահաւատ զըտնուեցան դէպի այս նոր եւ ապշեցուցիչ գիւտը. ոմանք ալ անոր հակառակեցան եւ ցայժմ ալ կը հակառակին՝ այն առարկութեամբ թէ այդ գիւտը գիտական հիմք չունի եւ գիտական ցայժմ ծանօթ սկզբունքներով եւ օրէնքներով չի կրնար մեկնաբանուիլ:

Սակայն ինչ որ ալ ըսուի այս գիւտին գիտական արժէքին մասին, սա որոշ է որ այդ ազնիւ Հայը այն տպաւորութիւնը կը թողու թէ նշմարած է կերպ մը, որ հնարաւոր կը դարձնէ օգտագործումը տիեզերական (cosmic forces), կամ որով կը ամսմահարէ այն զօրութիւնը, որ շարժման մէջ կը գնէ տիե-

զերբը ու կը ղեկավարէ երկնային մարմիններուն շարժումները:

«Զրի Ոյժ» կրնայ նշանակել այդ, կրնայ նշանակել նաեւ ուրիշ բան, զոր հասարակ մտհկանացուները չեն կրնար ըմբռնել:

Բնականաբար մարդկային աշխատանք, վառելանիւթ եւ այլ տեսակ վատտակ (work), որոնք զրամով կ'ըլլան, անհրաժեշտ չեն նոր ոյժ մը ի յայտ բերելու համար: Զգողութիւնը, հիւլէական ոյժը, էլեկտրականութիւնը, մագնիսականութիւնը եւ արեւի մառագայթումի այդ զարհուրելի ոյժը կը գործեն ամէն ատեն, անկախ մեր կամքէն ու գործերէն, բայց երբ կը փորձենք ուղղութիւն տալ ատոնցմէ՝ ունէ մէկուն, միշտ յառաջագոյնս կը գործածենք ուրիշ ոյժ մը. եւ այդ օժանդակ ոյժը կը գործէ այնպիսի եղանակով մը որ աշխատանք եւ նիւթի վատում կ'արժէ մեզի:

Այս սկզբունքով գրեթէ անիմաստ կը դառնայ «ձրի ոյժ» բացատրութիւնը:

Պրն. Կիրակոսեանի շատ անորոշ բացատրութիւնները «Զրի Ոյժ»ի մասին, եթէ նոյն իսկ ատոնք բան մը կ'արժեն, կը ցուցնեն թէ ինքը կը խօսի բանի մը մասին, զոր որոշ եւ յստակ կերպով չէ կրցած ձեւաւորել նոյն իսկ իր մտքին մէջ:

Բննիչ Յանձնախումբին անդամները, որոնց առջեւ իր գիւտը պարզելու ամէն գիւրութիւն եւ պահանջութիւն ունէր Պրն. Կիրակոսեան, իրենց ստո-

րագրութեամբ կը յայտարարեն թէ իրենք կը հաւատան որ Պրն. Կիրակոսեանի սկզբունքները անհիմն են եւ գիւտը անգործնական:

Բնականաբար հնարիչը կրնայ պնդել թէ իր սկզբունքները այնքան նոր գաղափարներ են, զոր քննիչներն իսկ չէին կարող ըմբռնել, սակայն այդ առարկութիւնն իսկ չի փոխեր իրականութիւնը թէ «Կարագլ»-ը գիտական օրէնքներու նոր դասաւորումին արդիւնքը չէ՞ ու չի՞ կրնար ըլլալ, մանաւանդ երբ նկատի առնուի որ Պրն. Կիրակոսեան չունի այդ հաստատութիւնը եւ մասնագիտական զարգացումը՝ այդ տեսակ գիտի մը հնարիչը ըլլալու համար:

Կ'երեւի թէ ինքը զո՞ն է այն ինքնապատրանքին (Self-delusion), հաւատալով որ իր գիւտը նոր զարեշքջան մը պիտի բանայ՝ մեծամեծ ծառայութիւններ մատուցանելով մարդկութեան

«Կարագլ»-ի ԳԿԱՐԱԳՐՈՒՄԻՆԸ. — Մեծազորորդ յայտարարութիւններով ծանուցուած այս գերահրաշ գիւտի մասին՝ ամէն մարդ մեծ անձկութեամբ կը փափաքէր իմանալ Քննիչ Յանձնախումբին որոշումը. մինչ այդ՝ իւրաքանչիւր որ ենթադրաբար շինած էր «Կարագլ»-ին նախագիծը իր մըտքին մէջ, եւ կը սպասէր որ հինգ հոգիներց Յանձնախումբին տեղեկագիրը յայտնաբերէր մերենական հանձարեղ յօրինուածք մը. «Բայց մեզի համար շատ որոշ է—կը նկատէ Scientific American գիտական ամսաթերթը որ այդ տեսակ պայմաններու տակ եւ այդպիսի աղբիւրէ մը բխած այգորինակ ներշնչու-

թիւն մը չի՝ կրնար վաւերական ըլլալ», եւ կը յաւելուի։ Սակայն եւ այնպէս մտքերնէս իսկ չէինք անցըներ որ «**Կորուսպէս**»-ն ալ կրնալ ըլլալ մշտնջենապէս շարժող տիպիկ մեքենական կետուրք մը (Scheme), յօրինուած եւ հետապնդուած այնպիսի անձեքու կողմէ, որոնք չեն գիտեր տարբերութիւնը գօրութեան (Force) եւ կարողութեան (Power) միջեւ։^(*)

Ձեյմս Ա. Մոյլըր, Բննիչ յանձնախումբին ատենապետը, կու տայ բաւական մանրամասն նկարագրութիւնը «Ջրի Ոյժ» արտադրող մեքենային։

«Մեքենան կը բաղկանար ծանր յարաշարժ անիւ (fly wheel) մը, որ շարժման մէջ կը զրուէր կարգ մը ճախարակներու միջոցաւ։ Յարաշարժ անիւը վեր բռնուած էր բարձիկներով (hearing), ուր շփումը իջեցուած էր նուազագոյն աստիճանի։ Անոր յարմարցուած էր տեսակ մը ելեկտրական շարժիչ, որ կը գործէր մարտկոցի մը միջոցաւ։ Արտադրուած գօրութիւնը կը բաւէր յաղթահարելու մեքենային շփումին եւ շարժական մասերու հովին դիմադրականութեանը։

«Հնարիչը կը հաւաստէր թէ մեքենան ինքն իրեն կը սկսի, բայց շատ ժամանակ կ'առնէ յարաշարժ անիւը իր լրիւ արագութեան մէջ դնելու համար. եւ այսպէս ուժեղ մարդ մը շարժման մէջ դրաւ զայն՝ ճախարակներու եւ փոկերու միջոցաւ։

(*) Կ'ակնարկուի այն կեդժ հնարիչներուն, որոնց մասին այժի խօսիմք աւելի վար։

«Մեքենան գործելու սկսելէն վերջ, հաղորդակցութեան մէջ զրուեցաւ մարտկոցին հետ եւ շարունակեց ինքն իր վրայ թաւալիլ անորոշ ժամանակի մը համար, յարաշարժ անիւը դառնալով ծայր աստիճան արագութեամբ, վայրկեանը մօտաւորապէս 100 ոտք, Յետոյ այդ մեքենային կարողութիւնը (power) չափուեցաւ միջոցով մը՝ նման տեսակ մը ուժաչափի (power dynamometer), որուն վրայ ծանրութիւններ զրուեցան, մինչեւ, որ մեքենան դադրեցաւ գործելէ։ Այս կերպով էր որ չափուեցաւ ծիւռ ոյժը։

«Երևութապէս ելեկտրական շարժիչին 1/20րդ ծիւռ ոյժ պէտք եղաւ՝ մեքենան շարժման մէջ դնելու համար, եւ 10 ծիւռ ոյժ հարկ եղաւ զայն կեցընելու համար. եւ այսպէս հնարիչը կը հաւատար որ յիշուի «Ջրի ոյժ» էր իր արտադրածը։

«Որոշապէս կը տեսնուէր որ նա տարրական ծանօթութիւն անգամ չունէր Բնագիտութեան մասին, այն տարրական ծանօթութիւնը, զոր բարձրագոյն կրթարանի մը աշակերտը ունի. այսպէս ինքը պիտի ըմբռնէր տարբերութիւնը գօրութեան եւ կարողութեան միջեւ։

Պէտք էր կատարելապէս յայտնի լինէր իրեն որ յարաշարժ անիւին մէջ ամբարուած ոյժը (energy)՝ մարդու կողմէն զրուած ոյժն էր։

«Բաւական ժամանակ իր մեքենան աշխատցնելէն ետք՝ Պրն. Կիրակոսեանի միակ ըրածը զայն կեցընել եղաւ եւ ցոյց տալ թէ ո՛րքան մեծ կարողու-

թիւն (power) էր արտադրուած՝ մէկ բանի վայրկեան գործածելով ոյժը (energy), որուն ամրաբուժը վայրկեաններ առաւ:

«Այս ցուցադրութեան տեսն իսկ ելեկտրական մեքենային յորինուածքը (electrical mechanism) պակաս էր եւ հնարիչը կը ջանար ապացուցանել որ յարաշարժ անիւը յաղթահարելով շփումին պատճառած կորուստները՝ կը գրոծէր առանց ոեւէ օժանդակ ոյժի:

Այնքան մեծխօսիկ եւ ճշճուն յայտարարութիւններէն վերջ՝ աշակիսի անարժէք գիտի մը ոգորմելի իրականութիւնը ուրիշ արդիւնքի չէր կրնար յանգիլ, քան այն միաձայն հաւանութեամբ տրուած որոշումը, որով Քննիչ Յանձնախումբը կը մերժէր «Կարապետ»ին գիտական արժէքը եւ գործնական հանգամանքը:

Դասն դասեր.— Որքան ալ մեր հայրենակիցը օժտուած ըլլայ գովելի բարեմասնութիւններով, իբր պատուաւոր եւ ուղղամիտ քաղաքացի, անշահախընդիր եւ պարկեշտ անհատ, որոնց մասին այնքան գովեստով կը վիայեն Ամերիկացի ականաւոր անհասներ, եւ որքան ալ շլացուցիչ եւ ակնհասճոյ յայտարարութիւններ եղած ըլլան «Կարապետ»ի նոր եւ ապշեցուցիչ գիտի մասին, բայց եւ այնպէս եղած են շատեր, որոնք թերահաւատութեամբ եւ քմծիճաղով մը ուզած են լսել այդ տեսակ «գիւտ»երու մասին:

Դեռ թարմ է կարգ մը շահադէտ «հնարիչ»ներու ըրած շահադիտութեանց յիշատակը շատերու մտքին՝

մէջ, եւ մանաւանդ անոնց պատճառած վնասը՝ շուտով հարստանալ փափարողներու քակիւն:

Ո՛չ շատ առաջ՝ Քիլլի անունով Ամերիկացի մը կը յայտարարէր թէ գտած է **Ծարձական սկզբունք** (Dynamic principle) մը, Քիլլի Ծարձիչը (keely motor) նմանապէս օգտուելով խորհրդաւոր «գորութիւն» մը (Force), որուն միայն ինքը վերահասու եղած էր, եւ որ կ'երաշխաւորէր հայթայթել անսահման ոյժ (Energy)՝ շատ չնչին վարձքի փոխարէն:

Քիլլի իր շարժիչին շնորհիւ շատ հանգիստ կեանք մը անցուց՝ աւելի քան քառուղի դար, անկէ մեծ եկամուտ մը ապահովելով:

Քիչ շատ զարգացումի տէր մարդիկ իսկ՝ մեծամեծ գումարներ դրին այդ գործին մէջ:

Ո՛չ որ կարողացաւ հասկնալ թէ ինչպէս կը գործէր մեքենան. Քիլլիի մահէն վերջն էր միայն որ երեւան ելաւ իր խարդախութեան գաղտնիքը: Իր «Եթերային Զօրութիւն» (Ethereic Force) կոչածը պարզապէս երեւակայական էր. պարզ քննութիւն մը երեւան բերաւ իրողութիւնը, այդ «զարմանալի» շարժիչը կը գործէր շնորհիւ մեքենայի մը, որ դրուած էր տան ներքնայարկը եւ գաղտնաբար միացած անոր:

Այս տեսակ զարմանալի «հնարիչ» մըն էր նաեւ Պատուելի Պրեատոն Ֆ, Զորնիգանը, Մկրտչական Նախկին քարոզիչ մը, որուն հիանալի «գիւտ»ը դեռ քանի մը տարի առաջ գրաւած էր հասարակութեան լայն խաւերու եւ ղիւրահաւան հնարիչներուն ուշադրութիւնը:

Պատուելի Ջըրնիգան «հնարած» էր հիանալի կերպ (process) մը. որուն շնորհիւ կարելի կըլար ոսկին գատել ծովին ջուրէն: Իր գաղտնիքը մեծ զգուշութեամբ ծածուկ պահեց, մինչեւ որ յաջողեցաւ գոյացնել 900,000 տուարի չափ հսկայ գումար մը՝ իրր զրամագլուխ իր ընկերութեան:

Պատուելի Ջըրնիգան իր խորհրդաւոր «հաւարող սնտուկը» (Box Accumulator) նաւահանգիստէն վար իջեցուց ջուրին մէջ, մինչ ինքը կը գուարճացնէր իր հիացած բաժնատէրերը նաւահանգիստին վրայ՝ սպասելով որ իր քաճիական գաղտնի բաղադրութիւնները կատարեն իրենց պաշտօնը: Այդ ատեն յանկարծ լուրորդ մը ջուրին մէջէն դուրս բերաւ սնտուկը, բացաւ հաւարողը, վերցուց քիմրական բաղադրութիւնները եւ վեր նետեց բուռ մը ոսկի. այսպէսով ալ երեւան ելաւ այդ խորհրդաւորութեան խարդախութիւնը:

Ինտելիտ վիճակը — Բնաւ տարօրինակ թող չթուի որ այս տեսակ դառն դասեր առնող սերունդի մը մէջ, եւ այսպիսի ժամանակ մը, ուր գիտութեան մարզին մէջ խորհրդաւորութիւնը յատկանիշ կը նկատուի անպարկեշտ գիտաւորութիւններու, Պրն. Կիրակոսեան՝ որքան ալ անկեղծօրէն հաւատացող ըլլար իր գիւտին գործնականութեան եւ օգտակարութեան, եւ որքան ալ բարի գիտաւորութիւններ ունենար, կամ պատուաւոր եւ ուղղամիտ անհատ լինէր, չէր կրնար զերծ մնալ կասկածէ: Եւ եթէ նա յաջողեցաւ. Congressին յետի ընել տալ ինքզինքը եւ մատաւոր օրէնք մը անցընել տալ ի պաշտպանութիւն իր «մեծ գիւտ»ին, պատճառը, ինչպէս ըսինք,

Եւրոպական Պատերազմին ստեղծած գերագրգիռ եւ անբնականոն վիճակն էր, որուն շուտով վերջ դնելու կոչումն ունէր «Կարապետ»ը,

Բննիչ Յանձնախումբին վերոյիշեալ տեղեկագիրը եւ ծխտական որոշումը, որով նոյն իսկ կուրանային «Կարապետ»ին գիտական արժէքը, միակ օրինական կերպ մը կը ձգէին Պ. Կիրակոսեանին ընելիք, ա՛յն էր ուղղակի դիմել Շնորհագրոց Պաշտօնատունը (patent Office), քննել տալ իր գիւտը եւ յաջողելու պարագային՝ ստանալ արտօնութիւն շահագործելու գայն:

Անցեալ տարի Պ. Կիրակոսեան կրկին անգամ դիմում կատարած էր Congressին, այս անգամ ո՛չ միայն Շնորհագրոց Շահագործումի (patent monopoly) իրաւունք ձեռք բերելու, այլ նաեւ ապահովելու համար կառավարութեան օժանդակութիւնն ու պաշտպանութիւնը՝ անհրաժեշտ պարագային ապացուցանել կարենալու համար թէ ինքն է առաջին եւ սկզբնական հնարիչը «Կարապետ»ին: Հայ հնարիչը անհրաժեշտ կը դատէ կառավարութեան մասնաւոր պաշտպանութիւնը, որովհետեւ կը վախճայ որ ուրիշներ կրնան գողնալ իր գիւտը եւ Շնորհագրոց պաշտօնատունը առանձինն պիտի չկրնայ պաշտպանել իր օրինաւոր իրաւունքները, որով իր առաջին իսկ քայլին՝ օրինական հետապնդութիւն եւ աւելորդ ծախսեր ընելու անհարկի դժուարութեանց պիտի ենթարկուի:

Ողորմելի՛ համոզանք, արդարեւ:

30 Յուլիս 1927
ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՅ

Ա.Ղ.Ս.Ե

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ Ն Ե Ր

Ա.

Նախ գտնել հետեւեալ բացատրութեանց համապատասխան բառերը:

1. Ժամանակին տպուած և միմիայն կանանց յատուկ գրքի մը անունը:

2. Տասներկուքներէ չորսի նոյնանման վերջաւորութիւն:

3. Ձկնորսութեան համար անհրաժեշտ:

4. Ըստ ֆրանսական առածի մը՝ եթէ անկէ չկայ՝ բարի է:

5. Մնունդ ընտանի կենդանիներու:

Ապա գտնուած բառերուն տառերով՝ ճիշդ առ ճիշդ կազմել խիստ բանուկ առած մը:

Բ.

Երկերկու առաւով ունիմ վանկ կրկին.

Շքէ՛ տառերը առաջին վանկին՝

Ահա կազմուած յայտնի մէկ պղեակ

Էջմօսի Տանքէսէ-մարդ կա՞յ անտեղիակ—

Հոն խիստ դառնագին յիստակներ կան.

Իմ երկրորդ վանկիս մակբայ ժխտական,

Իսկ իմ ամբողջս, քեզ չէ անձանօր.

Եթէ չգտնես՝ յիշակի ամօր:

ՏԻԿ. ՖԻՄԻ Կ. ՊԷԿԵԱՆ

Մեր հաւատարիմ և համակրելի աշխատակցուհիին մականունը փոխուած կը տեսնէք այս տարի. բերկրութեամբ կը տեղեկացնենք թէ՛ Եգիպտոսէ եկած և հոս հաստատուած Տիկ. Ֆիմի Մօլեան,



ՏԻԿ. ՖԻՄԻ

Կ. ՊԷԿԵԱՆ

որ Տարեցոյցիս մէջ զեանդած սրամիտ հանելուկներով, իբրև Սփինքսի պատգամաւորուհի սկսած է նըկատուիլ մեր մէջ, անցեալ տարուան ընթացքին իր ճակատագիրը միացուցած է արժանաւոր անձնաւորութեան մը, Տիար Կարապետ Պէկեանի հետ, առաջնակարգ ճարտարագէտ. ելքարագէտ:

Տիար Կ. Պէկեան իր բարձր արժանեօք, նորահաստատ անթել

հեռաձայնի կայանին, որ յՕսմանիէ, պետ կարգուած է հաստատման թուականէն իսկ:

Սոյն բարեբաստիկ միութեան առթիւ մեր ջերմ խնդակցութիւնները կը նուիրենք յոյժ շնորհալից Տիկ. Ֆիմիի և իր ամուսնոյն և իրենց լիուրի բարօրութիւն կը մաղթենք:

Լուծումեր անցեալ տարւոյ զայց հանելուկներուն: Առաջինը լուծեց միայն Պ. Հրաչեայ Պ. Զարդարեան

- 1. Բրիցն
- 2. Բեհեզ
- 3. Հար կատու
- 4. Պա սիժ
- 5. Կէլի պօ լու
- 6. Գոմ էշ

Բ. Ամօր honte
Հայերէն կ'ըսենք ամօրդ կերած ես
Ֆրանսացիք կ'ըսենք vous avez bu toute honte:

ԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ



ՅԱԿՈՒ ՅԱԿՈՒԵԱՆ. — Ազնիւ գերդաստանի ազնուագոյն շառաւիղ, համալսարանական կրթութեամբ եւ բարձր զգացումներով օգտակար եղած է մեր համայնքին Յաճախած է Րոպէրդ Գօլէժ, յետոյ Հայոէլէպէրկի համալսարանն եւ պարագած է փաստաբանութեամբ: Երկար տարիներ Ղալաթիոյ կեդր. վարժարանի ինստակալ եւ այս առթիւ նպաստաւորած է շատ մը ուսանողներ, եղած է



3. ՅԱԿՈՒԵԱՆ

նոյնպէս Ազգ. Պատրիարքարանի խորհուրդներուն ժողովական, բարեօէր, դրասէր, կը սիրէր հայ գրականութիւնը եւ հաւաքած էր շատ կարեւոր գրքեր, զորս յետոյ ամբողջովին նուիրեց Հայաստանի մատենադարանին: Գիտցած է քաջալերել նիւթապէս ամէն բարենպատակ ձեռնարկներ, կարող խորհրդական հայ մեծատուններու: Իր արտաքին վարժունքին մէջ իշխանական շուք մը ունէր եւ իբր վեհանձնութեան կենդանի արձան արժա-

նացած էր ընդհանուր յարգանքի: Մեռաւ Նիւի մէջ անցեալ տարւոյ Դեկտ.ին:

ՏՐՋԱՆԱՆ ԿԻՄԻՒՇԿԵՐՏԱՆ. — Շրջանաւարտ Օրթոդոքս հայկական կրթարանին, հայ եւ օտար շրջանակներու մէջ գնահատուած, իր բարեմոյն նկարագրով, ազնուական դիրքով, արժանաւոր յաջորդն էր իր մեծ գերդաստանին, եւ հանրօգուտ շրջան մը բոլորած է մեր մէջ. եղած է անդամ Բերայի Թագ. Խորհուրդին, Ազգ. Հեւանդանոցի Հոգաբարձութեան եւ Սանասարեանի ինստակալութեան. դժբախտաբար շատ կանուխ մեկնեցաւ աշխարհէ, մեռաւ Յունուարին Բարիզի մէջ:



S. ԿԻՄԻՒՇԿԵՐՏԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԵՎՈՒՆՅԱՆ. — Ուսուցիչ Ֆրանսերէնի երկար տարիներ, մեռաւ 1 Յունվ.ին:

ՏԻԿ. Ա.ԳԱՊԻ ՍԱՐԵՅՅԱՆ. — Կարող մանկապարտիզպանուհի, մեռաւ 7 Յունուարին:

Հ. ՆՍՍՅԻ Վ. ՏԱՅՅՅԻ. — Միլիթարեան Վեներաբոյ, ծնած Պարտիզակ 1868 Մարտ 4ին եւ մեռած Փետր. 2ին ի Միլան: Իր նախնական կրթութիւնը կ'ստանայ տեղւոյն Կաթ. Հայոց ժո-

ղօրդապետ Լ. Ներսէս ձնդոյեանէ, 1884ին կ'ուզարկուի վենետիկ, Ս. Ղազար, հոն դպրոցական շրջան բուրժուազ 1888 Ապր. 22 կը սքեմաւորուի իր միաբան Միխիթարեան եւ մինչեւ 1903 գործունէութեան շրջան մը կ'ուեննայ Ս. Ղազարի մէջ՝ Այնուհետեւ կը փոխադրուի Արեւելք կրթական եւ առաքելական գործերով, Պարսիկակ, Նիկովիդեա, Պոլիս իր անխոնջ կորովին վկաները կ'ըլլան. իր վերջին հանգրուանը կ'ըլլայ Միլան, ուր կը կարգուի վերատեսուէչ Միլանու որբանոցին եւ միանդամայն մեծաւոր Մի. Լարց: Բացի հասարակական գործերէ ծառայած է Լայ մատնագրութեան: Աշխատակցած է Բաղամովէպի, հրատարակած է Ս. Աթանաս հայրապետի ձառերը, Անկաճոն գերբ նոր կտակարանաց: Անտիպ կը մայ կրմէ Գէորգ Ապտուլասի վրայ շահեկան ուսուցումսիրութիւն մը:

Լ. Եսայի իր բարեհամբոյր եւ ազնիւ նկարագրով շատերու սիրելի ըլլալուն՝ հաճութեամբ տեղ տուին ճարեցոյցիս սուղ էջերուն մէջ անոր յիշատակին նուիրուած ողբերգի մը:

ՏԻՐ ՈՍԿԻ Ա. ԳԷՆՅ. ՊԵՊԻՍՆ.— Բնիկ

Նիկովիդացի. ձեռնադրուած Ստեփանոս Արքեպս. է եւ շատ տարիներ Առաջնորդական փոխանորդ եւ ներկայացուցիչ Արմաշու դպրեվանքին, պատուաբեր եկեղեցական՝ որ կանխահաս վախճան մը ունեցաւ դժբախտաբար, վախճանեցաւ փետր. 21ին եւ իր կոչման արժանի յուղարկաւորութիւն մը սարքուեցաւ իրեն իբր յարգանքի խաղաղ ցոյց մը:

ԲԻԻԶԱՆԴ ԲԷԶԵԱՆ. — Ինձ Պոլիս 1859ին եւ մեռած Յունիս 29ին անզուգական հրատարակագիր, որ նախնական կրթութիւնը ստացած է Գում-գաբուի Մայր վարժարանը շատ կանուխէն լրագրական ասպարէզ իջած է եւ իբր օգնա-



ԲԻԻԶԱՆԴ ԲԷԶԵԱՆ

կան խմբագիր Մասիս օրաթերթի ուշագորաւ եղած է իր ընդարձակ յօդուածներով այլազան նիւթերու վրայ: Յետոյ գլխաւոր խմբագիր եղած է Արեւելքի 1906ին հիմնած է Բիւզանդիոնը եւ վարած է զայն մինչեւ 1914: վերջին տարիներուն Նոր

Լուրի մէջ հասուն խորհրդածութիւններով լեցուն շաբաթական տեսութիւնները մեծ հետաքրքրութիւն պատճառած են: Իր ողջամիտ, ջրուտ եւ կրօնովի ոճը ցնցող բան մը ունէր իր մէջ եւ կը մատնանշէր զինքը իբր տիպար խմբագրապետ եւ իբր հսկայ մը հայ լրագրութեան: Ախոս'ս, որ կանխահաս մահը վերջացուց մամուլի մէջ սաանձնած իր աւագ դերը:

ՄԻՄՈՆ Ծ. Վ. ԹԷՂԵՍՆ. — Յուլիսի մէջ վախճանած է շաքարախտէ: Միաբան Ս. Երուսաղէսի եւ վանքին կալուածոց տեսուչ օծումը կատարուած է Տ. Եղիշէ Եպս. Ձիլինկիրեանէ, ծնած է 1870ին Պոլիս եւ կանուխէն վանք մտնելով վարդապետ ձեռնադրուած է Տ. Յարութիւն Պատրիարքէ: Վարած է վանքին մէջ եւ անկէ դուրս կարեւոր պաշտօններ եւ միշտ օգտակար եղած է վանքին:

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵՍՆ. — Սեղանաւոր, գործօն մասնակցութիւն մը ունեցած է հանրային պաշտօններու մէջ իբր անդամ Թաղ. Խորհուրդներու եւ իբր ժողովական Ազգ. Պատրիարքարանի: Իցի՛ւ թէ ինք՝ մօտէն գիտակ մեր բաղմաղան կարօտութիւններուն՝ իր հարստութիւնէն կանուխէն բաժին հանէր բարեգործական նպատակներու համար: Մեռաւ Ապրիլ 5ին:

Տ. ՅԱԿՈԲՈՍ ԳԼՆՅ. ՏԷՂԷՃԻԿԱՆ. —

Քերայի Ս. Երրորդութեան քահանայներէն, բնիկ Ձենկիլէրցի, կը յիշանի Յուլիս 22ին: Հանգուցեալը ճանչցուած էր անշահախնդիր եւ գիտակից քահանայ, երկու անգամ անդամակցած է կրօն. ժողովին: Քերայի հարուստ աղուարձանը՝ ուր կ'ենթագրուի մօտաւորապէս 15000 հայ բնակչութիւն, պէտք չէ լքէ այսպիսի արժանաւոր եկեղեցականի մը այրի երիցուհին՝ որու համար ինչպէս կը տեղեկանանք, պաշտպանութեան կարօտ է դժբախտաբար:

ԳՐԻԳՈՐ ՅԷՐԶԱՏԵՍՆ. հանրածանօթ

առեւտրական, շառաւիղ ազնիւ գերդաստանի, շըրջանաւարտ Պէրպլերեան վարժարանի, կանուխէն հըրօպարակ իջած եւ իր ձեռներէց եւ յարատեւող ոգւով պատուաւոր դերք մը գրաւած է եւ միջազգային համբաւ շահած: Ունեցած է օգտակար մասնակցութիւն մը հանրային գործերու: Եղած է երկար տարիներ Սիւլուարու Ս. Խաչ Եկեղեցոյ Թաղ. Խորհրդոյ եւ Հոգաբարձութեան անձնուէր անդամ, յետոյ կեդր. վարչութեան, Քերայի Թաղ. Խորհրդոյ եւ կալուածոց անդամ եւ իր իմաստուն խորհուր-



Գ. ՅԷՐԶԱՏԵԱՆ

դներով, բուրրանուէր աշխատութեամբ իրաւունք շահած է ընդհանուր յարգանքի: Մեռաւ 7 Հոկտեմբերի:

ԳՐ. ՅՈՎԱԿԻՄԵՍՆ, ընթացաւարտ Պէրպերեան վարժարանէ, կեդրոնականի արժէքաւոր ուսուցիչներէն: Յիշեալը բաւական տարիներ ուսուցչական պաշտօն վարած է ազգ. եւ մասնաւոր վարժարանները, մասնաւորաբար կ'աւանդէր բնական գիտութիւնները, իր կարողութեամբ եւ բարեհամբոյր բնաւորութեամբ սիրելի եղած էր մինչեւ վերջ: Մեռաւ Օգոստ. 2ին:

Անցեալ տարւոյ ընթացքին մեռաւ կալկաթայի մէջ մեծահարուստ հնդկահայ **Պ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՏԵՓԱՆՈՍԵԱՆ** որուն կենսագրականը հրատարակեցինք մեր անցեալ տարւոյ Տարեցոյցին մէջ: Անոր արժանաւոր ներբողեանը հիւսեց Տ. Գարեգին քհնյ. Յ. Կիրակոսեան, ներկայացնելով զանի բարեւէր մեծագործ: Անշուշտ անոր հօրամոյն որդիք իրենց մեծանձն հօրը յիշատակը յաւերժացնելու համար լիառատ նուէրներով ազգային կարօտութիւններու կը նպաստեն յօժարափոյթ եւ այն ատեն Հայութիւնը իրաւամբ երախտագիտական պըսակներով կը ծածկէ իրենց անզուգական ծնողին մահարձանը:

ԿՄՐԻԱՍՍ ԴՆՅՈՂՈՒՔ ԵՂԵՆԻՊՈՒՄ



Ջերմապես կը յանձնարարուին Ֆրանսեակեր դիւրաւ սուփլու անհրաժեշտ հետեւեալ նորախոյ գրօյկները սկսնակներու համար. —

1. ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆ ՖՐԱՆՍԵՐԻՆ ԼԵՂՈՒ. — Ընթերցողներու թիւն և զրուցատարութիւն. Ե. տիպ. Միքան Յովհաննէսեան, գին 15 դր.
 2. ՖՐԱՆՍԵՐԻՆ ԼԵՂՈՒ, բարեկամ մանկանց, բաւազրթոյ և խօսելալարժեայ. դրոյ. տ. ճկ. հնչու. մեկերով. ֆրոծ. Միքան Ազնաւեան, գին 25 դր.
- Դիւիէլ Կ. Պոլիս, Չափաքճըլար, սղբելիքն մօտ, թիւ 50, Ս. ԳԱՅԱՄԱՃԵԱՆ Կրատուն:

ԺԱՄԱՆՅԻ ԳԻՐՔԸ
 ԶՈՒՍՐՃԱԼԻ, ՀԱՃՈՅԱԼԻ
 Օ Գ Տ Ա Կ Ա Ր

Բաղդազուեակնե՛ր, անա Չեզի նոր մր-
 ցակից մր, որովհետեւ գաղսնալից խորհրդա-
 լոր երազներ մեկնող, ներկայի մրութիւն
 փարատող, ապագան զուեակող ԲԱՂԳՈՅՈՅ
 ԵՆ ԵՐԱԶԱՀԱՆՐ լոյս տեսաւ:

Գին 30 դրու, Արսասնման 5 ժր, կամ
 1 շիփն եւ կամ 30 սէնք:

Շուսով լոյս կր տեսնէ:

ԵՂԻՍՍ ՏԼՄԻՐՃԻՊԱՇԵԱՆԻ

ՄՐԱՆՄԱՀԱՅ ԲԱՌԱՐԱՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Գերագանցապէս հոխտամ

Տպագր. Յ. Մ. ԱԷԹ

Յ. Մ. ԱԷԹ

ՏՊԱՐԱՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ

ԵՆ ԹՂԹԱՎ

Տպարանս որ ունի ամեն տեսակ Հայ. Ֆրնս.
 թուրքերէն գրերու նոյս մթերք մը, կտանձնէ
 դիւրամատչելի պայմաններով գրքերու, տետ-
 րակներու եւլն. նաշակաւոր տպագրութիւնը:

059
 4-13

6669

2013

« Ազգային գրադարան



NL0032724

